

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Զարմանալի ազգ ենք մենք՝
նախ սովամահ կանենք մեր
գրողներին, հետո արդեն
կսկսենք մեծարել նրանց:

Լեռ Կամսար



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....4
- 4- Սփյուռք.....6
- 5- Միջազգային.....11
- 6- Հասարակական.....12

Պարսկերեն բաժին

- Աղվանք, Ադրբեջանի ռազմագործություն.....0-1
- Գորգեն Խանջյան2-7

Շապիկի առաջին էջում՝ Սարգիս Հացալանյան

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 231, Հունվար 2018 No. 231, January 2018

ماهنامه لویس - شماره ۲۳۱ بهمن ماه ۱۳۹۶

Մշակութային և Հասարակական Ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Դարախանյան, Վահիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت : www.louysonline.com



Լեռ Կամսար

Հայր անհարմար ազգ է, անգամ թեթե հզոր ծնվի՝
Նախարարությունների ու կուսակցությունների բաժանված ինքն իրեն
պիտի կոտորի: Դա նրա մասնագիտությունն է դարձել դարերով:

Լեռ Կամսար

Հինգշաբթի 18.- Կար ժամանակ, երբ հայ ազգի ղեկավարները,
մեծ պետությունների դռներն ընկած, անկախություն էին
մուրում ու չէին ստանում: Իսկ հիմա, որ ՄԱԿ-ը կտուրը
բարձրացած բղավում է՝ հեյ, աշխարհի բոլոր մանր ազգեր,
եկեք ձեզ անկախություն տամ, հայ ազգը չի երևում... Ասիայի
ու Աֆրիկայի մոտ երեսուն վայրենի ցեղեր եկան իրենց
անկախությունն առան գնացին, իսկ հայությունը չկա ու չկա:

Ամեն անգամ, երբ ՄԱԿ-ը հայի անունը կարդում է, կողքի
նստողները ասում են՝ «բացակա»: Այդ անտերի
անկախությունն էլ այնպիսի բան չէ, որ տա մեկին, ասի՝ տար
Հայաստանին տուր. ամեն ազգ իր ուղքով պիտի գա ստանալու:
Թեև դիվանագիտության մեջ պատահել են դեպքեր, երբ մի
պետություն շատ փոքր լինելով, պատ բռնելով է քայլել, ու մի
մեծ պետություն գրկած՝ ՄԱԿ է բերել իր անկախությունը
ստանալու:

Այսպես արեց Ռուսաստանն Ալբանիային:

Խեղճ հայ ազգ... ՄԱԿ-ը երևի չի իմանում այս հիսուն տարում
ինչեր անցան նրա գլխով: Դա մի խուրճին էր, ձգված
Բարդուղյան լեռնաշղթայի ուսովը: Մեկ թայը կախված էր
Թուրքիա, մյուսը՝ Ռուսաստան:

1915 թվին Թուրքիան խուրճին իր մասը դատարկեց իսպառ,
իսկ ռուսական մասի Հայաստանն էլ 1921 թվին ընկնելով
բոլշևիկյան իշխանության տակ՝ իբրև ազգ պորթեզ դարձավ:
Թխկացնում են՝ հայ ազգի ձեռն չի տալիս:

Ասա տեսնենք, սիրելի ՄԱԿ, մի փայտե ոտ ունեցող ազգ կարո՞ղ
է ներկայանալ թո տված անկախությունը ստանալու: Կամ
ստանա՞լ ի՞նչ անի, երբ սեփական տուն չունի: Տաճկաստանում
անկախություն պահանջելու համար կոտորվեց, հիմա էլ
անկախություն պահանջի ու կոտորվի բոլշևիկներից:

Կոտորվել թուրքերից փառք է, իսկ կոտորվել հայերից՝ դա
սուկայի է: Ամբողջ ընտանիքով գաղթել Շահ Աբասի ձեռքով
դեպի տաք Իսպահան՝ երանություն է, իսկ կին-երեխաներով
աքորվել Սիբիրի սառնամանիքը հայ բոլշևիկի ձեռքով՝ ահեղի
է: ՄԱԿ ջան, մեր անկախության վրա գրի՛ր «ցայահանք» ու
պահիր. աշխարհ է, ո՞վ գիտի, գուցե մի օր կազատվենք
բոլշևիկյան լծից: Այն ժամանակ կգանք ու կստանանք մեծ
շնորհակալությամբ: Տոնություն:

ՄԱԿ-ին ճամփու ղեկուղ հետո, եկեք ազգովին նստենք և մեր
մեջ խոսենք: Մեր ազգը ա՞զգ է, որ դրա համար անկախություն
պահանջենք: Ե՞րբ ենք մենք մի ազգ եղել: Նախկինում
բաժանված ենք եղել չորս նախարարության, ներկայումս՝ չորս
կուսակցության:

Չորս չորս էլ՝ հավասար է ութի: Անկախությունը որքա՞ն մեծ
լինելու է, որ ամբողջ ութ պետության բավարարի:
«Պետություն» եմ ասում, որովհետև այս մասերը հաճախ
պատերազմի են ելել իրար դեմ ու դիմկներ փռել:

Վարդանանց պատերազմին Վասակ Սյունին պարսկական
փղեր հանեց Հայաստանի դեմ, 1921 թվականին հայ բոլշևիկը
ռուսական բանակ կանչեց երկիր, հայությունը բնաջնջելու:

Օտար պետությունները երբ պատերազմում են իրար հետ,
վերջ ի վերջո հաշտության պայմանագիր են կնքում: Բայց հայ
ցեղի այս բաժան մասերը մի րոպե զինադադար անգամ չեն
կնքում: Պատերազմող պետությունները քսանմեկ տարեկան
երիտասարդներ են բանակ կանչում, իսկ սա հայկական
պետությունները զորակոչում են ի ծնե:

Այն ատելությամբ, որով ասում են Հայաստանի այս
կուսակցությունները իրար, թեթ թշնամու դեմ դուրս գային,
նրանց դեմ ոչ թուրք, ոչ պարսիկ, ոչ բոլշևիկ կոլիմանային:
Հիշո՞ւմ եք, երբ առաջին համաշխարհային պատերազմի
ավարտին դաշնակները և ռամկավարները գնացին Փարիզ
անկախություն ուզելու՝ ռամկավարները կախվեցին, բայց
չապրեցին դաշնակների «անկախում»: Ինձ որ լսեք՝
կիրաժարվեք այս մեկ ութերորդ անկախությունից...

Առաձն ասում է՝ «Պահք ուտեմ ժաժի՞կ ուտեմ»:

1960թ. (անտիպ)

Հայաստանի Հանրապետություն

Մահացել է Սարգիս Հացպանյանը
20.01.18



Այսօր 55 տարեկան հասակում մահացել է հասարակական, քաղաքական գործիչ, Արցախյան ազատամարտի մասնակից Սարգիս Հացպանյանը: Այդ մասին նրա ընկերները տեղեկացրել են գործի ֆեյսբուքյան էջում: Նույն էջում ավելի վաղ արված գրառումների համաձայն՝ Սարգիս Հացպանյանը հիվանդ էր և «կյանքի ու մահվան կռիվ էր մղում»: Ծնվել է Թուրքիայի Ալեքսանդրիդ քաղաքում, 1980-ական թվականներին Թուրքիայում զինվորական հեղաշրջման հետևանքով մեկնել է Եվրոպա, դարձել է Ֆրանսիայի քաղաքացի: Ավարտել է Սորբոնի համալսարանի ռեժիսուրայի բաժինը: 1990 թվականից բնակվել է Հայաստանում:

Վերջին հրաժեշտը՝ Սարգիս Հացպանյանին

29 Հնվ. 2018 «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի է ունեցել հասարակական, քաղաքական գործիչ, Ղարաբաղյան պատերազմի մասնակից, 55-ամյա Սարգիս Հացպանյանի հուղարկավորությունը:



Հունվարի 28-ին Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում տեղի էր ունեցել Սարգիս Հացպանյանի հոգեհանգստյան արարողությունը:

Սարգիս Հացպանյանը մահացել է հունվարի 20-ին Լիոնում, հիվանդանոցում, ուր տեղափոխվել էր ծանր հիվանդության պատճառով:

Սարգիս Հացպանյանը ծնվել է 1962 թվականին Թուրքիայի Հաթայ նահանգի Ալեքսանդրետ քաղաքում, 1980-ականներին Թուրքիայում ռազմական հեղաշրջման հետևանքով մեկնել է Եվրոպա, դարձել է Ֆրանսիայի

քաղաքացի: Ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանի ռեժիսուրայի բաժինը:



ՊՆ-ն թույլատրել է Սարգիս Հացպանյանին հուղարկավորել «Եռաբլուր»-ում

1990-ից բնակվում էր Հայաստանում, մասնակցել է Ղարաբաղյան պատերազմին: 2009-ին ապրիլին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատապարտվել է 3.5 տարվա ազատազրկման՝ սուտ մատնության մեղադրանքով, պատիժը կրել է ամբողջությամբ:

Այսօր՝ հունվարի 29-ին, «Եռաբլուր» պանթեոնում կայացավ հասարակական, քաղաքական գործիչ, Արցախյան ազատամարտի մասնակից Սարգիս Հացպանյանի հուղարկավորության արարողությունը:

Ս. Հացպանյանին վերջին հրաժեշտը տալու էին եկել նրա հարազատներ, ընկերներն ու հասարակական գործիչներ:

Սարգիս Հացպանյանը ծնվել էր 1962 թվականին Թուրքիայի Ալեքսանդրիդ քաղաքում: 1980-ական թվականներին Թուրքիայում զինվորական հեղաշրջման հետևանքով մեկնել է Եվրոպա, դարձել է Ֆրանսիայի քաղաքացի: Ավարտել է Սորբոնի համալսարանի ռեժիսուրայի բաժինը: 1990 թվականից բնակվել է Հայաստանում:

Հացպանյանը կյանքից հեռացել է հունվարի 20-ին Ֆրանսիայի Լիոն քաղաքի հիվանդանոցներից մեկում



Այսօր «Եռաբլուր» հուշահամալիր-պանթեոնում հուղարկավորեցին հասարակական, քաղաքական գործիչ, Արցախյան ազատամարտի մասնակից Սարգիս Հացպանյանին: Հարազատները, ընկերները, գործընկերներն ու հասարակական գործիչներ Հացպանյանին վերջին հրաժեշտը տվեցին:

Պայքարող տեսակ էր. տեղի ունեցավ Սարգիս Հացպանյանի հոգեհանգստյան արարողությունը

Հացպանյանին բնորոշ ամենակարելուր հատկանիշը պայքարող մարդ լինելն է: Ազատամարտիկ, հրապարակախոս Սարգիս Հացպանյանի հոգեհանգստի արարողության ժամանակ, այսօր՝ հունվարի 28-ին, NEWS.am-ի հետ զրույցում ասաց «Կարին» ազգագրական երգի ու պարի համույթի ղեկավար Գագիկ Գինոսյանը:

«Ինքը պայքարող մարդ էր, պայքարող տեսակ եւ նունիսկ շատ ժամանակ ոչ շախմատային քայլեր էր անում, որի հետեւանքով նաեւ բանտում հայտնվեց, ամեն ինչին շատ բուռն էր արձագանքում եւ երեւի դրա համար էլ օրգանիզմը չդիմացավ», - ասաց Գագիկ Գինոսյանը:

Գագիկ Գինոսյանը հավելեց, որ Սարգիս Հացպանյանին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում հուղարկավորելու հարցում որպեսզի այսպիսի իրավիճակ չստեղծվեր, անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը ունենա արցախյան ազատամարտի բոլոր մասնակիցների անունները եւ նրանց մասին տեղեկությունները:

ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար Անդրանիկ Քոչարյանն էլ նշեց, որ Սարգիս Հացպանյանի հարցում պետք է խնդիր չառաջանար, նրան Եռաբլուրում հուղարկավորելու հետ կապված:

«Սարգիսն այն մարդկանցից է, որ հենց առաջին օրից եկան, մասնակցեցին, իրենց ավանդը դրեցին հաղթանակների կերտմանը եւ պատահական չէ, որ ինքը հայտնվեց, մեր ամենափառահեղ ջոկատներից մեկում՝ Լեոնիդի ջոկատում: Այսինքն ուրանալ, այն ինչ եղել է, անհնար էր: Շատ ուրախ եմ, որ այդ որոշումը ճիշտ կայացվեց եւ Սարգիսը կհայտնվի իր ընկերների կողքին», - ասաց Անդրանիկ Քոչարյանը:

Սարգիս Հացպանյանի մարտական ընկեր Վոլոդյա Ավետիսյանն էլ ասաց, որ 1991 թվականին, երբ Հացպանյանը եկել է Հայաստան, միացել է Լեոնիդ Ազգալոյանի ջոկատին:

«Սարգիսը մեծ ներդրում ունի մեր անկախության կերտման օրից մինչեւ այսօր եւ միանշանակ, այստեղ քննարկման ենթակա չէր, որ պետք է նախագահին ասի, կամ ինչ-որ մեկն ասի: Մենք գիտենք՝ էսօր ոնց է իրավիճակը, անհատական մոտեցում է, ճնշում են, նեղացնում են», - ասաց Վոլոդյա Ավետիսյանը:

Սարգիս Հացպանյանին հոգեհանգստին մասնակցեցին նրա ընկերները հարազատները, քաղաքական գործիչներ եւ ուղղակի քաղաքացիներ:



Արցախում օտարերկրյա ներդրումներով մի քանի աննախադեպ ջրամբար է կառուցվում. Արտակ Բեգլարյան

Արցախում օտարերկրյա ներդրումներով մի քանի աննախադեպ ջրամբար է կառուցվում՝ հիդրոէներգետիկայի արագ զարգացմանը զուգահեռ: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Արցախի վարչապետի մամուլի քարտուղար Արտակ Բեգլարյանը:

Նա, մասնավորապես, նշել է.

«Տարիներ առաջ Քաշաթաղի շրջանում մեկնարկած՝ 12 միլիոն խմ ծավալով ջրամբարի կառուցումն այս տարի կավարտվի, որի վրա կգործարկվի նաև 5.95 մՎտ դրվածքային հզորությամբ ՀԷԿ. ընդ որում՝ սա ջրամբարով ՀԷԿ-ի կառուցման առաջին դեպքն է անկախ ՀՀ-ի և ԱՀ-ի պատմության մեջ: Ջրամբարը կիրառվելու է նաև ձկնաբուծության և ոռոգման նպատակներով: Ուշագրավ է, որ սեփականատերն օտարերկրյա ներդրող է, ով նախագծի վրա ծախսել է մի քանի տասնյակ միլիոն դոլարի հասնող գումար:

Դրանից բացի, օրեր առաջ պետական նախարար Արայիկ Հարությունյանը հայտարարեց, որ առաջիկա տարիներին Սարսանգ-Մատաղիս հատվածում չորս նախագիծ է իրականացվելու, որոնց շրջանակներում ջրամբարներ են կառուցվելու՝ հիդրոէներգետիկայի, ոռոգման և ձկնաբուծության նպատակներով: Այդ նախագծերի արժեքն

անցնելու է 100 միլիոն դոլարը, որի զգալի մասը ներդրվելու է օտարերկրյա ընկերությունների կողմից:

Տեղեկացնեմ, որ 2018 թվականին նախատեսվում է շահագործման հանձնել 6 փոքր հիդրոէլեկտրակայան՝ 28.5 մՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ և 161.7 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրանքով: Ներկայումս Արցախում գործում է 16 ՀԷԿ, որոնց արտադրությունը 2017թ.-ին կազմել է 327,8 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա, իսկ ընդհանուր սպառման ծավալները հանրապետությունում կազմել են 351,1 մլն կՎտ/ժ: Պլանավորվում է մի քանի տարում սեփական արտադրանքը հասցնել ավելի քան 800 մլն կՎտ/ժ-ի, և դա այն դեպքում, երբ 10 տարի առաջ այն չէր գերազանցում 90 մլն կՎտ/ժ-ը»:

Ես Հայաստանից չեմ գնացել, որ վերադառնամ. Արմեն Սարգսյան



Ես Հայաստանից չեմ գնացել, որ վերադառնամ: Այս մասին, այսօր՝ հունվարի 30-ին, Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցած հանդիպումից հետո լրագրողների հետ զրույցում նշեց ՀՀ-ի կողմից երկրի նախագահի առաջադրվելու առաջարկություն ստացած Արմեն Սարգսյանը՝ անդրադառնալով հարցին, թե մշտապես է վերադարձել Հայաստան, թե՛ կրկին կհեռանա Բրիտանիա: Նա հայտարարեց, որ ընդմիջտ է եկել Հայաստան:

Անդրադառնալով դիտարկմանը, որ իր կինը հայտարարել էր, որ որդիներն իրենց բրիտանացի են զգում, Արմեն Սարգսյանն արձագանքեց, որ իր երկու որդիները եւ Բրիտանիայի քաղաքացի են, եւ Հայաստանի. «Հետեւաբար, հավասարաչափ լինելով Բրիտանիայի քաղաքացի՝ պետք է զգան և ապրեն Բրիտանիայի քաղաքացի: Միաժամանակ, լինելով ՀՀ քաղաքացի, պետք է լինեն ՀՀ քաղաքացի՝ դրանից հետևելով եզրակացություններով: Եթե «Daily Mail»-ի հոդվածը մանրամասն կարդաք անգլերենով, կհասկանաք, որ թարգմանությունը որ դուք ունեք, այդպես չի հնչում: Կինս ասել է, որ այդ, նրանք իրենց բրիտանացի են զգում՝ Բրիտանիայում ապրելով, բայց հպարտ հայեր են»:

Արմեն Սարգսյանը հերքեց, թե որեւէ առնչություն ունի Ամուլսարի հանքի շահագործումն իրականացնող ընկերության ետ: «Իմ հետ դա բացարձակապես կապ չունի: Կարող եք որոնել համացանցում եւ տեսնել»:

Արմեն Սարգսյանը չցանկացավ պատասխանել այլ հարցերի եւ հեռացավ: Նա նշեց, որ հիմա հանդիպումներ է իրականացնում տարբեր ուժերի ու հասարակական խմբերի հետ. «Երբ ավարտեմ եւ որոշումս կայացնեմ, դուք կլինեք առաջիններից մեկը, որ կիմանաք դրա մասին»:

Ուրարտական Օձաբերդ ամրոցի քաղաքային թաղամասում կյանքը շարունակվել է նաեւ թագավորության անկումից հետո. հնագետ



Ուրարտական Օձաբերդ հուշարձանի պեղումները, որոնք 2017-ին են իրականացվել, ցույց են տվել, որ ամրոցի տարածքում կյանքը շարունակվել է նաեւ Վանի թագավորության անկումից հետո, Երվանդունիների կառավարման ժամանակաշրջանում: Այս մասին հունվարի 29-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնել է Հայաստանի պատմամշակութային հուշարձան-արգելոցների ու պատմական միջավայրի պաշտպանության ծառայության գիտական քարտուղար Աշոտ Փիլիպոսյանը: Նրա խոսքով՝ Միքայել Բադալյանի ղեկավարած գիտարշավին մասնակցել են Իրանից, Ռուսաստանից ու Ավստրալիայից ժամանած գործընկերներ:

Օձաբերդը գտնվում է Սեւանա լճի ափին, Ծովինար ու Արծվանիստ համայնքների միջև: Այստեղ պահպանվել է Ռուսա առաջինի սեպագիր արձանագրությունը՝ լճի մոտ 4 ցեղախմբերի ու լեռներից այն կողմ 19 ցեղախմբերի նվաճման մասին: Քաղաքը կոչվում է Թեյշեբաինի՝ տարերքների ու պատերազմի աստծո անունով:

Բայց ամենահետաքրքիրն այն է, որ Աշոտ Փիլիպոսյանի խոսքով, ամրոցի սահմաններից դուրս հայտնաբերվել է մեծ քաղաքային թաղամաս, որը գոյություն է ունեցել նաեւ Երվանդունիների դարաշրջանում: Հնագետի խոսքով՝ Հայաստանի տարածքում այդ ժամանակաշրջանի շատ սակավաթիվ հնագիտական վկայություններ են պահպանվել:

Պատասխանելով լրագրողների այն հարցին, արդյոք այդ վայրում կլիման այն ժամանակներում ավելի մեղմ է եղել՝ Աշոտ Փիլիպոսյանը նշել է, որ հողի շերտի հետազոտությունները ցույց են տալիս, որ այստեղ առանձնահատուկ կլիմայական փոփոխություններ չեն եղել: Բայց եղել է ուժեղ աղետ՝ Ք.ա 11-12-րդ դարերում՝ Նորատուս գյուղի տարածքում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որի էպիկենտրոնը Սեւանա լճում էր գտնվում, ինչի հետևանքով Գեղամա լեռնաշղթայում գոյացել է ճաք, որը կլանել է այն ժամանակ Սեւան հոսող գետերը: Այնպես որ Գեղամա լեռնաշղթայի լանջերին գտնվող բնակավայրերը ոչնչացել են, մնալով առանց ջրի:

2017թ. մեր տնտեսությունը արձանագրել է աննախադեպ 7.7% տնտեսական ակտիվության աճ. Խորհրդական



2017թ. մեր տնտեսությունը արձանագրել է աննախադեպ 7.7% տնտեսական ակտիվության աճ 2016-ի համեմատ: Այդ մասին NEWS.am-ի հետ զրույցում ասել է ՀՀ Կառավարության եւ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների նորարարական կենտրոնի ղեկավար, ՀՀ Կառավարության Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի խորհրդական Էրիկ Գյուլազյանը:


Նրա խոսքով, դա շատ լուրջ ցուցանիշ է միջազգային բոլոր համեմատականներով, ընդ որում ունենք արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ՝ 12.6%, ծառայությունների ծավալի աճ՝ 14.4%մ, ներքին առևտրի շրջանառության աճ՝ 14%, առևտրաշրջանառության ծավալի աճ՝ 26.9%, արտահանման աճ՝ 25.2%, ներմուծման աճ՝ 27.8% եւ այլն: «Այս ամենը մեզ եւ մեր գործընկերներին թույլ է տալիս խոսել ավելի ծավալուն համատեղ ծրագրերի մասին, որոնք նոր ոլորտներ կընդգրկեն: Ասիական զարգացման բանկի հետ 2019-2023թ. մեր համագործակցության ռազմավարության մեջ կարձանագրենք մեզ համար կարելի լուրջ ցուցանիշներ, որոնցում կաշիատենք մեր գործընկերների հետ՝ ներառյալ ենթակառուցվածքները, թվայնացումը, կրթությունը, տուրիզմը եւ այլ ոլորտներ, որ միասին կնախորդենք քննարկումների ընթացքում: ԱԶԲ նախագահը նաեւ ընդունել է ՀՀ Վարչապետի՝ Հայաստանի այցելելու հրավերը եւ հունիսին կժամանի Երեւան», - նշել է Գյուլազյանը:

Խոսելով Դավոսում ձեռքբերված պայմանավորվածությունների մասին՝ խորհրդականը նշել է, թե Դավոսը հարթակ է, որտեղ հավաքվում են տնտեսական, քաղաքական, գործարար, հասարակական համաշխարհային առաջնորդները՝ քննարկելու արդի խնդիրները եւ անելիքները: «Ըստ էության, Հայաստանը հրավեր ստացավ, վերադարձավ այդ հարթակ եւ ցույց տվեց, որ այդ հարթակը կարող է օգտագործել մեր երկրի նպատակներին հասնելու եւ մեր խնդիրները լուծելու համար՝ լսելի, հասկանալի եւ ընդունելի դարձնել Հայաստանի տնտեսական հնարավորությունները եւ գործարար գրավչությունը, ներառյալ իր սահմաններից դուրս ավելի մեծ շուկաներ մտնելու տեսանկյունից», - ասել է նա:

Ըստ Գյուլազյանի, բացի երկկողմ հանդիպումներից, համաժողովի հարթակի վրա քննարկվում են աշխարհի առջեւ կանգնած ամենախոշոր մարտահրավերները, դրանց

լուծման ուղիները եւ նոր հնարավորությունները: «Կարծում եմ, յուրաքանչյուր երկիր անկախ իր չափից եւ կարողություններից ասելու բան ունի կապված այդ մարտահրավերների եւ հնարավոր լուծումների հետ՝ մեր դեպքում՝ մեր շահերից ելնելով: Այդ մարտահրավերների մեծ մասը նաեւ ակտուալ է Հայաստանի համար եւ մենք եւս ունենք լուծումներ, որոնք կարող ենք առաջարկել եւ առաջարկել ենք: Մասնավորապես, Վարչապետ Կարեն Կարապետյանը հրավեր է ստացել եւ մասնակցել է Դավոսի ամենա բարձր մակարդակի՝ IGWIL-ի՝ Համաշխարհային տնտեսական առաջնորդների ոչպաշտոնական խմբի երկու հանդիպումներից երկուսին էլ, ինչպես նաեւ Կառավարիչների հանդիպմանը՝ Governors Policy Meeting-ին», - ասել է Էրիկ Գյուլազյանը:

Հիմնական սկզբնական ցուցանիշները (2017թ. հունվար-դեկտեմբեր)



Արեւմտյան Հայաստան

Արա Գյուլերին նվիրված երեկոյին Էրզրոդանի խոսնակն է մասնակցել

Ստամբուլի Ուսքյուդարի շրջանում պոլսահայ հայտնի լուսանկարիչ Արա Գյուլերին նվիրված երեկո է կազմակերպվել:

Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Ուսքյուդարի քաղաքապետարանի կողմից կազմակերպված երեկոյին մասնակցել են հայտնի լուսանկարիչներ, արվեստագետներ,

քաղաքական գործիչներ եւ արվեստով հետաքրքրված քաղաքացիներ:



Միջոցառմանը ներկա է եղել նաեւ Թուրքիայի նախագահի մամուլի խոսնակ Իբրահիմ Զալընը, ով եւս գովեստի խոսքեր է հղել դահլիճում գտնվող Արա Գյուլերին: Ստամբուլում հայ լուսանկարչի անունով փողոց է վերանվանվել:



Ստամբուլի Բեյոյլու թաղամասի Թուրքոզ փողոցն արդեն պաշտոնապես Արա Գյուլերի անունով է կոչվում: Ստամբուլահայ հայտնի լուսանկարիչ Արա Գյուլերն իր անունով վերանվանված փողոցում ա «Արա Գյուլերի փողոց» անունը կրող ցուցանակը լուսանկարել եւ տեղադրել է Twitter-ի իր էջում: «Բեյոյլուի Թոմթոմ թաղամասում Թուրքոզ փողոցի աւոնը փոխվել է որպէս Արա Գյուլերի փողոց»,–գրել է Արա Գյուլերը Twitter–ում: Նշենք, որ «Դարի լավագույն լուսանկարիչ» ճանաչված Արա Գյուլերը, ում նաեւ անվանում են «Ստամբուլի աչք», ծնվել է 1928-ին Ստամբուլում: 1950-ին սկսել է լրագրողական գործունեությունը Yeni İstanbul պարբերականում: Արա Գյուլերը ստացել է բազմաթիվ մրցանակներ եւ տիտղոսներ թե՛ Թուրքիայում, թե՛ աշխարհի ամենահայտնի կազմակերպությունների կողմից: Իրականացրել է ֆոտոռեպորտաժներ համաշխարհային պատմության հայտնի դեմքերի, այդ թվում՝ Ուինսթոն Չերչիլի, Առնոլդ Թոյնթի, Բերթրանդ Ռասելի, Պիկասոյի, Սալվադոր Դալիի եւ այլոց հետ:

Թուրքական առք ու վաճառքի կայքում հայ միջնադարյան մանրանկարչության բացիկներ են վաճառքի հանել



Թուրքիայում հայտնի առք ու վաճառքի կայքում վաճառքի են դրվել քրիստոնեական մոտիվներով հայ միջնադարյան մանրանկարչության 16 բացիկներ:

Վաճառողը նշել է, թե վաճառքի է հանվել բացիկների հազվագյուտ կոլեկցիա հայկական սրբապատկերներով: 16 բացիկի համար վաճառողը պահանջում է 300 դոլար:



Միլիոնը

Ամերիկահայ բարերարը շուրջ 100 անվանում բժշկական սարքավորումներ է գույք է նվիրել ՊՆ-ին



Հունվարի 25-ին ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանն այցելել է ՊՆ դեղորայքի եւ բժշկական գույքի կենտրոնական բազա, ծանոթացել ՉՈՒ ռազմաբժշկական ծառայությանը ամերիկահայ բարերար Մայք Սարիանի նվիրաբերած սարքավորումներին ու պարագաներին: Նվիրատվությունը, որը ներառում է շուրջ 100 անվանում բժշկական սարքավորումներ եւ գույք, փոխանցվել է «Հույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի միջոցով: Ամերիկահայ բարերարը զինված ուժերի ռազմաբժշկական ծառայությանը նվիրաբերել է մեծաքանակ բժշկական սարքավորումներ եւ գույք, խնամքի պարագաներ, բժշկական ծախսվող նյութեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է մոտ 10 մլն դոլար:



Նվիրաբերված բժշկական սարքավորումներն են՝ շարժական ռենտգեն ապարատներ, անզգայացման եւ արհեստական շնչառության ապարատներ, ուլտրաձայնային հետազոտման սարքեր, լաբորատոր ախտորոշիչ սարքավորումներ, հիվանդների խնամքի մոնիտորինգի եւ ավտոմատ ներարկման համակարգեր եւ այլն: ՀՀ ՊՆ դեղորայքի եւ բժշկական գույքի կենտրոնական բազայում պահեստավորված սարքավորումները եւ գույքը, խնամքի պարագաներն ու ծախսվող նյութեր, ըստ կարիքների, բաշխվելու են զինվորական հոսպիտալներին:

Կարեւորելով սահմանամերձ համայնքների առողջապահական համակարգի արդյունավետ գործունեությունը՝ սարքավորումների որոշ մասը

կհատկացվի սահմանամերձ համայնքների առողջապահական հաստատություններին:

Սամել Կարապետյանը երրորդն է Forbes-ի «Ռուսաստանի անշարժ գույքի թագավորները-2018» վարկանշում



Հայերի կողմից Ռուսաստանի Դաշնությունում հիմնադրված երկու ընկերությունները ներառվել են Forbes-ի հերթական «Ռուսաստանի անշարժ գույքի թագավորները-2018» վարկանշում:

Ցուցակի երրորդ տեղում է ռուսաստանցի գործարար Սամել Կարապետյանի «Տաշիր» ընկերությունների խումբը: Ընկերության՝ վարձակալությունից ստացված եկամուտը 2017 թվականին 650 մլն դոլար է կազմել: «Տաշիր»-ը յուրաքանչյուր տարի մոտ 500.000 քառակուսի մետր տարբեր նշանակության տարածքներ է կառուցում: Բացի Take Away եւ Good's House խանութների ցանցից, 2017 թվականին «Տաշիր»-ը գործարկել է նաև One Way կոշիկի ապրանքանիշը: Մոսկվայում եւ Երևանում այս ապրանքանիշի 6 մանրածախ խանութ է բացվել: Վարկանշի 28-րդ տեղում է Ռուբեն Վարդանյանի եւ Գագիկ Ադիբեկյանի RD Group-ը: Ռուբեն Վարդանյանի հիմնադրամների հետ համատեղ ընկերությանն է պատկանում մոտ 1 միլիարդ արժողությամբ առևտրային անշարժ գույքի պորտֆելը, իսկ 2017 թվականին ընկերության՝ վարձակալությունից ստացված եկամուտը 65 միլիոն դոլար է կազմել:

«Համշենուհի» միությունը Կարո Փայլանին Նոբելյան մրցանակի ներկայացնելու հայտ է տվել



«Համշենուհի» համշենահայերի կանանց միջազգային միության ղեկավար Սաիդա Օհանյանի դիմումը Կարո Փայլանին Խաղաղության Նոբելյան մրցանակի ներկայացնելու հայտի մասին հայտարարությամբ է հանդես եկել:

Հայտարարության մեջ Սաիդա Օհանյանը դիմել է բարի կամքի տեր մարդկանց, անանց իրավունքների, ինչպես նաև մարդկային իրավունքների պաշտպան բոլոր կազմակերպություններին ու միություններին միանալ իրենց նախաձեռնությանը եւ ձայնը տալ Կարո Փայլանին:

«Խնդրում ենք նաև Ձեր կողմից ինքնուրույն կերպով դիմել Նոբելյան կոմիտե՝ 2018 թ. Նոբելյան խաղաղության մրցանակի արժանանացնելու Կարո Փայլանին, որպես ժամանակաշրջանի մեծ մարդասերի եւ մարդկային

իրավունքների պաշտպանի: Հիշեցնենք, որ հայտը ներկայացնելու ժամանակը խիստ սահմանափակ է, 2018 թ. Հունվարի 30-ը դրա եզրափակիչ օրն է: Վստահ ենք, Ձեր մասնակցությունը եւ Նորեյսան կոմիտեի դրական որոշումը միասին էական ներդրում կդառնան աշխարհի ամենատար կետում՝ Մերձավոր Արեւելքում, կայուն խաղաղության եւ ազգերի միջեւ իրական համաձայնության ու համագործակցության հաստատման գործում», -նշվել է Սաիդա Օհանյանի հայտարարության մեջ:

Հրանտ Դինքին սպանել է թուրքական պետությունը. Ջեմ Օզդեմիր



Գերմանիայի Բյոլն քաղաքում տեղի է ունեցել Հրանտ Դինքի հիշատակին նվիրված միջոցառում:

Ինչպես տեղեկանում ենք Ստամբուլի հայկական «Ակոս»-ից, Բյոլնում Դինքի հիշատակի միջոցառմանը մասնակցել են Թուրքիայի եւ Գերմանիայի հայտնի մտավորականներ եւ քաղաքական գործիչներ:

Միջոցառման ժամանակ խոսքով հանդես է եկել Գերմանիայի Կանաչների կուսակցության համամասխագահ Ջեմ Օզդեմիրը՝ հայտարարելով, որ Դինքին սպանել է թուրքական պետությունը:

«Դինքի սպանությամբ Թուրքիայում ժամանակը հետ գնաց: Թուրքիայում հիմա նույնիսկ մամուլն ազատ չէ», -ասել է Ջեմ Օզդեմիրը:

Թուրք հայտնի իրավապաշպան Ռազմի Չարաբօյուն իր հերթը նշել է, որ Դինքի սպանությունը կազմակերպողները մի բան հաշվի չէին առել, որ Դինքի սպանությունը Թուրքիայի հասարակության մոտ խղճի պայթյուն կառաջացնի: «Այս առումով Հրանտ Դինքն իր մահով Թուրքիայում շատ բան փրկեց», -ասել է Չարաբօյուն:

Հարաբերական անդորր հաստատվելուց հետո սիրիահայերը սկսել են վերադառնալ իրենց բնակավայրեր. Ժիրայր Ռեհիսյան

Հարաբերական անդորր հաստատվելուց հետո ի՞նչ վիճակում է հայ համայնքը, ի՞նչ խնդիրների առջև է կանգնած եւ ինչպե՞ս է դրանք հաղթահարում: Այս հարցերի շուրջ NEWS.am-ի թղթակիցը գրուցել է Սիրիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Ժիրայր Ռեհիսյանի հետ:

Մինչև պատերազմական գործողությունների սկսվելը Սիրիայում քանի՞ հայ է ապրել եւ, մասնավորապես, ո՞ր քաղաքներում:

Մինչ պատերազմը Սիրիայի տարածքում, ենթադրաբար, շուրջ 75-80 հազար հայ էր բնակվում, որոնց մեծ մասը՝ Հալեպում: Մեծ թվով հայեր կային նաեւ հյուսիսային Սիրիայի Դամիշլի քաղաքում: Հայ ընտանիքներ կային Հասաքե, Ռազա, Հոմս քաղաքներում, Դերիք, Ռաս ուլ Էյն, Թել Աբիյաթ եւ Դերբեսիե գյուղաքաղաքներում, փոքրաթիվ համայնքներ էլ՝ Ռաքքայում եւ Դեր Չորում: Ծովափնյա շրջաններից էլ հայերը բնակվում էին Լաթաքիայում եւ Քեսաբում, Տարտուսում եւ Բանիասում: Իսկ մայրաքաղաք Դամասկոսում մինչ պատերազմը հայերի թիվը 12-15 հազար էր:



Երկրում հարաբերական անդորր է հաստատվել. ո՞րքան են Սիրիա վերադարձած հայերը, եւ, մասնավորապես, ո՞ր երկրներից են վերադարձել:

Կնախընտրելի առայժմ թվերով չխոսել, քանի դեռ պաշտոնապես մարդահամարի արդյունքներ կամ վիճակագրական հստակ տվյալներ չեն ներկայացվել: Սակայն վերադարձողներ կան, ինչպես Հալեպ, այնպես էլ, վստահաբար, այլ քաղաքներ: Ընտանիքներ կան, որոնք վերադարձել են Լիբանանից, Հայաստանից, ինչպես նաեւ Արեւմուտքից՝ Շվեդիայից, Ավստրալիայից եւ այլն: Իրենց բնակավայրեր են վերադարձել նաեւ ներքին տեղահանվածները, որոնք զինված բախումների ժամանակ համեմատաբար ապահով քաղաքներ էին գնացել:

Ի՞նչ դժվարությունների առջև է կանգնած համայնքն այս օրերին:

Անկասկած, վերականգնումը պարզ եւ դյուրին չէ, չի կարող լինել: Նախ հարկավոր է վերականգնել ավերված ու վնասվածը, աշխատել վերականգնել համայնքի տնտեսական հսկայական կորուստները: Նրանք, ովքեր լավ են ճանաչում սիրիահային, գիտեն, որ նա կարողանում է փյունիկի պես վեր հանել ու վերապրել: Սիրիահայը կյանքը շարունակելու անկոտրում կամք ունի: Բնականաբար, այս հարցում կարելու տեղ ունեն մեր երախտարժան աջակիցներն ու նրանց ցուցաբերած անվերապահ օժանդակությունը:


Ի՞նչ ծավալի վնասներ է կրել հայկական ժառանգությունը Սիրիայում:

Պատերազմական գործողությունների ընթացքում համայնքը մեծ վնասներ է կրել. հրկիզվել եւ վնասվել են եկեղեցիներ, դպրոցներ, հիվանդանոց, ծերանոց... Բազմաթիվ բնակարաններ, գործարաններ ու խանութներ են քանդվել կամ կողոպտվել: Բացի այդ, համայնքը զոհեր է ունեցել, նաեւ ծանր վիրավորներ ու անհետ կորած տասնյակ հայեր կան:

Պատերազմական գործողությունների հետևանքով վնասված հայկական կրթական, մշակութային եւ հոգեւոր կենտրոնների վերականգնման ու բարեկարգման ծրագրեր նախատեսված են: Դրանք համայնքի ուժերով են կատարվելու, թե՛ նաեւ պետության աջակցությունն եք ակնկալում:

Ոչ միայն նախատեսել, այլեւ արդեն նախաձեռնել ենք: Օրինակ՝ արդեն վերանոգրվել է Քարէն Եփփէ ազգային ճեմարանի մասնաշենքերից մեկը, այնտեղ արդեն ուսումնական պրոցեսը բնականոն ընթանում է: Վերանորոգվում են նաեւ բազմաթիվ տներ եւ խանութներ: Վնասված կառույցներն ուսումնասիրվել են, մեծ մասի նորոգման ծրագրերն արդեն պատրաստ են: Բնականաբար, այդ աշխատանքները կիրականացվեն՝ հաշվի առնելով առաջնահերթությունները:

Թուրքիայի խորհրդարանի հայ պատգամավորները շնորհավորել են հայերին Սուրբ Ծնունդի առթիվ



Խաղաղ աշխարհի մը
երագով կը շնորհավորեմ
Ս. Ծնունդը:

Կարո ՓԱՅԼԱՆ
Պոլսոյ Պատգամավոր

Թուրքիայի խորհրդարանի 3 կուսակցությունների հայ պատգամավորները շնորհավորել են հայերին Սուրբ Ծնունդի կապակցությամբ:

Ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» (CHP) կուսակցության հայ կին պատգամավոր Սելինա Դոդանը Twitter-ի իր էջում հայերենով եւ թուրքերենով շնորհավորել է Սուրբ Ծնունդը:

«Խաղաղ աշխարհի ունենալու երագանքով շնորհավորում եմ Սուրբ Ծնունդը», սոցցանցում գրել է քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը:

Իսկ Էրդողանի ղեկավարած «Արդարություն եւ զարգացում» կուսակցության հայ պատգամավոր Մարգար Եսայանը գրել է. «Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ: Մեզ եւ ձեզ մեծ ավետիս: Ծնորհավորում եմ բոլոր հայերի Սուրբ Ծնունդը, թող լինի խաղաղություն եւ կայունություն»:

Գայանե Մահրեջյան. Մաուդյան Արաբիայի մետրոյի շինարարության վրա աշխատող միակ հայուհին

Գայանե Մահրեջյանն այնպիսի կանանցից է, որնաշխատում է Մաուդյան Արաբիայի մայրաքաղաքում մետրոյի շինարարությունում: Երեւանում ծնված, սակայն, Բեյրութում մեծացած Գայանեն NEWS.am-

ին տված հարցազրույցում հիշում է իր լիբանանյան երիտասարդ տղային, տարբեր երկրներում աշխատանքի եւ խորձի մասին:

Հայրս մեկնեց Բեյրութ, մենք մնացինք, պատերազմ էր
Ծնողներս հանդիպել են, երբ հայրս Բեյրութից եկել էր Երեւան սովորելու: Երեւանում: Միրահարվել են, ամուսնացել, համալսարանն ավարտելուց հետո հայրս այստեղ աշխատանք չէր կարողանում գտնել, երեք տարի անց ստիպված էր Բեյրութ վերադառնալ: Մենք էլ պիտի գնայինք, բայց պատերազմը սկսվեց, միայն հորս գնալուց երկու տարի անց մենք կարողացանք Բեյրութ մեկնել: Երբ գնացինք, ես արդեն 6 տարեկան էր, պատերազմ էր... երբ պատերազմն ավարտվեց, ես ընդունվեցի համալսարան ինժեներության բաժինը, ինչը նշանակում էր՝ ընտանիքս ամեն գոհողության պետք է գնար իմ ուսման համար:



Գրասենյակում պիտի աշխատեի, բայց իմ կյանքն այլ ըն թացք ստացավ

Այնտեղ, ուր ես էի աշխատում, տնօրենս մի քանի շենք ուներ, ես էլ շինարարության վրա էի աշխատում. Ես 23-24 տարեկան աղջիկ, մնացածը տղամարդիկ՝ աշխարհի տարբեր կողմերից եկած: Պատկերացրեք՝ 50-60 տղամարդու հետ ամեն օր ճաշում էի: Եկավ մի օր, որ զգվեցի այս ամենից: 1995 թվականին Բեյրութում որոշեցին քաղաքում մեծ թափով շինարարություն սկսել՝ փորձելով նորացնել քաղաքը: Մեզ հետ դա կարծես թե կապ չուներ, որովհետեւ մենք հայերի հետ էինք չփնջվում, հայերեն էինք խոսում, հայի հետ էին ամուսնանում, որ լեզուն, կենցաղն ու մշակույթը պահենք, բայց երբ աշխատում ես, հորիզոնդ բացվում է եւ հասկանում ես, որ դու պիտի Բեյրութի մասը կազմես, քո մասնիկը դնես այս քաղաքի մեջ: Հենց այդ ժամանակ էլ որոշեցի գործս փոխել ու սկսեցի զբաղվել գովազդով եւ վաճառքով, իհարկե, էլի կառուցապատման ոլորտում: 7 տարի այդ գործին մնացի, 13 ինժեներ ունեի: 2005թ.-ին որոշեցի դուրս գալ Լիբանանից, ինձ օգնեց մանկությանս ընկերուհին:

Լիբանանից որ դուրս եկա, գրպանումս 500 դոլար էր ընդ ամենը

Պարտականություններ ունեի ընտանիքիս նկատմամբ, հայրս գրեթե չէր աշխատում, եղբայրս բանակում էր, ես պետք է տունը պահեի, փոքր եղբայրս էլ ինձ զավակի պես էր, պիտի պահեի: Ես արդեն 32 տարեկան էի, բավականին մեծ էի Եվրոպա գնալու համար: Մեկնեցի Քաթար,

օղանավակայանում սկսեցի աշխատել: Այնտեղ ինժեներ էի աշխատում, 1.5 տարի աշխատել եմ այնտեղ:

Քաթարից կյանքն ինձ տարավ Աբու Դաբի, ապա Դուբայ

Քաթարից մեկնեցի Աբու Դաբի, որտեղ նավահանգիստը սկսեցինք կառուցել, նախագիծը մենք ենք արել, կարելի է ասել՝ կյանքն ինձ տարավ Աբու Դաբի: 1 տարի 8 ամիս էլ այնտեղ եմ աշխատել, փորձս կամաց-կամաց ավելանում էր, գործս էլ լավագույնս էի կատարում: Մի անգամ ինձ զանգեցին, թե աշխատանքի առաջարկ ունեն ունեն ինձ համար: Վեր կացանք ու ընկերուհիներով մեկնեցինք Դուբայ այդ աշխատանքի հետևից: Ինձ այնտեղ ասացին, որ աշխարհի լավագույն ընկերություններից մեկն ինձ աշխատանքի է հրավիրում, գնացի, ծանոթացա ու որոշել մնալ: Բիզնես կենտրոն էինք նախագծելու:

37 տարեկանում սկսեցի ֆրանսերեն սովորել

Եղբայրս ընդունվեց Կանադայի համալսարաններից մեկը, հենց այդ ժամանակ Դուբայում աշխատանքս եղավ: Բայց 2008թ.-ին ամբողջ Դուբայում ճգնաժամ սկսվեց, մեր հաճախորդը սնանկացավ, մեկ տարվա պայմանագիրը ձգվեց մինչև 2.5 տարի: Աշխատում էի ֆրանսիացիների հետ, որոնք բոլոր խորհրդակցություններին ֆրանսերեն էին խոսում, ստիպված ես էլ 36-37 տարեկանում սկսեցի ֆրանսերեն սովորել:

Կյանքը Դուբայում լրիվ ուրիշ էր, շատ-շատ արագ է անցնում: 2.5 տարի մնալուց հետո կրկին Աբու Դաբի վերադարձա, նախագիծն ավարտեցինք:

Դուբայից Օման. ոնց որ քաղաքից գյուղ գնաս

Օմանը շատ գեղեցիկ երկիր է: Ինչ-որ ունեինք Դուբայում, տարանք Օման: Հետաքրքիր էր փորձն Օմանում, օմանցիները շատ օրիգինալ են, ընկերասեր, հյուրընկալ: Շատ են ուրախանում, որ իրենց երկրում ես աշխատում, մի նոր բան ես բերում իրենց երկիր: Երբ որ Բեյրութ էի գնում, տեղս չէի գտնում, հայ ես՝ հայ, լիբանանցի ես, լիբանանցի: Մարդ իր օրենքներին պիտի հետևի, ուրիշ օրենքներ ես չեմ իմանում:

Էր-Ռիյադում զարմանալի է, որ չամուսնացած կին եմ ու աշխատում եմ

Էր-Ռիյադում եմ արդեն 2.5 տարի, մետրոյի նախագծման աշխատանքներ ենք անում: Կանայք այստեղ կարելի է ասել տարբեր պայմանների մեջ են, բայց պայքարում են իրենց իրավունքների համար, Մաուդյան Արաբիայի կանայք այլ տեսակի ուժ ունեն, խելացի են շատ: Կանանց 22 տոկոսը տնտեսագետներ են, իրենց համար զարմանալի է, որ ես չամուսնացած կին եմ ու աշխատում եմ:

Կինը պետք է իր ուժը ցույց տա, ոչ թե փորձի նմանվել տղամարդուն

Վիճակագրության համաձայն՝ 200 ինժեներից 3-ն են կին: Երբ նոր էի մտել այս ոլորտ, պետք է երկու անգամ ավելի աշխատեի, որ կարողանայի ներգրավվել թիմում, որովհետև տղամարդիկ արդեն մտել էին որպես տղամարդ: Կինը պետք է ցույց տա իր ուժը, այն, ինչ լավ է անում, ոչ թե տաղանդ փնտրի ու փորձի նմանվել տղամարդուն: Գործը շատ պիտի սիրես, գոհողության գնաս:

Դու ես քո ընկերը, աղջկա հոգեբանության մեջ դրված է, որ տղամարդը պետք է իր մասին հոգ տանի, բայց դա լավ ֆորմուլա չէ: Այսօր կնոջ համար պայմանները հեշտացել են, պարտադիր չի, որ տղամարդը կնոջ ձեռքը բռնի ու տանի կինոթատրոն... հիմա ես ընկեր ունեմ, ուրախ եմ,

մասնագիտական կարողություններս եմ զարգացնում, բայց որ տունը նստեմ, ինձնից տխուր մարդ չի լինի: Ամուսնությանը դեմ չեմ, բայց պիտի նախ քեզ վրա աշխատես:

Երեւանում հին շենքերի մեջ ավելի շատ հոգի կա

Վերջին անգամ Հայաստան էի եկել 2014թ.-ին՝ հայկական անձնագիր վերցնելու: Այս անգամ հատուկ արձակուրդ եմ վերցրել ու եկել Երեւան: Շատ կուզեի այստեղ նոր բան անել, որովհետև զարգացման մեծ ներուժ ունի:

Ես հին Երեւանն եմ սիրում, երբ նախորդ անգամ եկա, Հյուսիսային պողոտան նոր էր կառուցվում, հիմա արդեն մոլ էլ կա այնտեղ: Շատ երկրներում եմ եղել, բայց Երեւանը եզակի գեղեցկություն ունի, հիմն ու նորը միաձուլված են: Կուզեի, որ բարձրահարկ շենքեր չլինեն, 3-4 հարկանի շենքերը մնային, ֆրանսիական ոճով շենքերն ավելի շատ լինեն: Օրինակ, Դուբայում այսօր գեղեցիկ շենքեր չկան, Երեւանում հին շենքերի մեջ ավելի հոգի կա: Պետք է գովազդել մեր մայրաքաղաքը, որ ավելի շատ զբոսաշրջիկներ գան:

Սիրիահայերը ևս ներկայացված կլինեն Սոչիում կայանալիք Սիրիայի ազգային երկխոսության պատվիրակների կազմում




Սոչիում Սիրիայի ազգային երկխոսության Կոնգրեսի մասնակիցների թվում նաև հայեր կլինեն: Սիրիական խորհրդարանի պատգամավորներ Նորա Արիսյանը և Ժիրայր Ռեհիսյանը արդեն իսկ գտնվում են Սոչիում: ատվիրակների մեծ մասը (94.5%) արաբներ կկազմեն: «Հնդիստան առմամբ Կոնգրեսին ավելի քան 1600 պատվիրակ է հրավիրվել, որոնք ներկայացնում են սիրիական հասարակության բոլոր շերտերը: Ներկայացված են նաև քրդեր, եզդիներ, ասորիներ, չերքեզներ, չեչեններ, դադստանցիներ, արաբներ, թուրքեր ու դրուզներ: Սիրիայի ազգային երկխոսության կոնգրեսը պաշտոնապես կբացվի վաղը, թեպետ հյուրերի մեծ մասը սեւեռական քաղաք պետք է ժամանեն արդեն այսօր:

Իրաքի Մոսուլ քաղաքի հայկական եկեղեցիներն այսօր

Իրաքի 2-րդ ամենամեծ քաղաքում՝ Մոսուլում, հայերը հաստատվել են շատ հին ժամանակներից: Այս մասին են վկայում բազմաթիվ փաստեր, ինչպես օրինակ՝ 1352 թվականի ձեռագիր Քարոզգիրքը՝ «Գրեալ ի քաղաք Մոսուլի ի Մանուէլ քահանայէ» (Կարինյան ցուցակ, 2206 թ.): Հետեւաբար, կարող ենք եզրակացնել, որ արդեն իսկ 14-րդ դարում Մոսուլում հաստատված էին հայեր, որոնք ունեին հոգևոր հովիվ և բնավ բացառված չէ, որ ունեին նաև եկեղեցի:




Ինչպես «Հայերն այսօր»-ին տեղեկացրել է Չախոյի հոգևոր հովիվ Տեր Մամբրե քահանա Հմայակյանը, այսօր Մոսուլում ունենք 2 հայկական եկեղեցի, որոնք այսօր ավերվել են ահաբեկիչների կողմից:
Սբ. Էջմիածին եկեղեցի



Եկեղեցիներից հինը կոչվում է Սբ. Էջմիածին, որի կառուցումն ավարտվել է 1857թ. հունիսի 7-ին: Այն Իրաքի Հայոց թեմի ամենագեղեցիկ եկեղեցիներից է եղել, սակայն կապված վերջին տարիների դեպքերի հետ, անխնա անարգվել ու ավերվել է ԻԴ-ի կողմից: Ըստ եկեղեցու մոտակայքում ապրող Մոսուլման ընտանիքներից ստացած տեղեկությունների՝ եկեղեցին օգտագործել են որպես դատարան, իսկ բակում գտնվող Առաջնորդարանը՝ որպես բանտ (նկարներում, եթե ուշադիր նայենք, ապա կտեսնենք, որ պատուհանները երկաթյա ճաղերով են փակված):

Այս պահին քաղաքն ազատագրված է ահաբեկիչներից, բայց դեպի եկեղեցի տանող ճանապարհն ամբողջությամբ ռմբակոծված է եւ հնարավոր չէ ո՛չ մեքենայով, ո՛չ էլ ոտքով հասնել եկեղեցի: Օրերս դա անել հաջողվել է Մոսուլի Թաղական խորհրդի ատենապետ պարոն Անդրանիկ Կյուլիզյանին: Վերջինս զիվորների ուղեկցությամբ եկեղեցի է հասել տների մեջ բացված անցքերով, որոնք փորել էին ահաբեկիչները քաղաքում ազատ եւ անվնաս տեղաշարժելու համար: Պարոն Կյուլիզյանի խոսքով, եկեղեցու բակում ԻԴ-ի զինվորների դիակներ են եղել: Նորակառույց եկեղեցի



Մեր մյուս եկեղեցին նորակառույց է, դեռ չէր օծվել եւ անվանակոչվել, երբ սկսվեցին վերոհիշյալ դեպքերը: Այն եւս ավերված է: Եթե Սբ. Էջմիածնի պարագայում եկեղեցու տարածքը օգտագործվել է, որի արդյունքում պատերը կանգուն են մնացած, ապա նորակառույց եկեղեցին մի քանի անգամ փորձել են գետնին հավասարեցնել՝ օգտագործելով պայթյունիկներ, բայց նոր կառուցված լինելու եւ ամուր հիմք ունենալու շնորհիվ՝ լիարժեք իրենց ուժածին չեն հասել: Այս պահին Մոսուլում ապրում է 3 հայ ընտանիք, թվով 10 մարդ:

Վրաստանում Հայ առաքելական եկեղեցին փոխհատուցում կստանա կրած վնասների համար



Վրաստանում Հայ առաքելական եկեղեցին եւս կստանա 600 000 լարի փոխհատուցում խորհրդային տարիներին ստացած վնասի համար, հաղորդում է Jnews.ge-ն: Ըստ religion.geo.gov.ge-ի տեղեկատվության Վրաստանի կառավարությունը կրոնական հարցերով Պետական գործակալությանը հանձնարարել է բաժանել գումարները,

որպես խորհրդային ժամանակահատվածում ստացած վնասի փոխհատուցում:

Կրոնական համայնքների միջև գումարների բաժանման որոշումը կայացվել է խորհրդակցությունների արդյունքում եւ հաշվի առնելով փաստացի իրավիճակի ուսումնասիրության արդյունքները (ծխականների թիվը, հոգեւորականների քանակը, կրոնական շինությունների եւ կառույցների քանակը):

Կրոնական հարցերով պետական գործակալությունը որոշում է կայացրել «2018 թվականի Վրաստանի պետական բյուջեի մասին» օրենքի համաձայն, հատկացված 4 500 000 լարիից այս փուլում կրոնական կազմակերպություններին, որպես հատուցում, բաժանել միայն 3 500 000 լարի: Վրացական իսլամական համայնքը փոխհատուցում կստանա 2 200 000 ԱՄՆ դոլար, Վրաստանի հայ առաքելական քրիստոնեական համայնքը՝ 600 000 լարի, Վրաստանի հռոմեական կաթոլիկ համայնքը՝ 400 000, Վրաստանի հրեական համայնքը՝ 300 000 լարի:

Մնացած գումարը՝ 1 000 000 լարի չափով, կբաժանվի ավելի ուշ:

Միջազգային

ԱՄՆ նախկին դատախազը ցավում է Հայոց ցեղասպանության հարցով սխալ որոշման համար



Քալիֆորնիայում նախկին շրջանային դատախազ Դեյվիդ Մինյերը հոգված է գրել, ներկայացնելով Սանտա Բարբարայում թուրք երկու դիվանագետների գնդակահարած Գուրգեն Յանիկյանի դատաքննությունը:

«78-ամյա Յանիկյանը Ֆրեզնոյի նախկին բնակիչ է եղել եւ մեղադրվում էր սպանության մեջ, իսկ ես նրա դատախազն էի», - գրում է Մինյերը «Fresno Bee» կայքում հրապարակված հոդվածում:

«Տարեց հայր Սանտա Բարբարայում «Բալթիմոր» շքեղ հյուրանոցի քոթե(էր հրավիրել դիվանագետներին՝ խոստանալով նրանց կառավարության արվեստի գործեր նվիրել: Դրա փոխարեն նա հանել էր ատրճանակն ու գնդակահարել դիվանագետներին: Այա նա զանգել էր ընդունարան, հայտնել, որ սպանել է երկու «չարագործների» եւ հանգիստ սպասել ձերբակալությանը», - գրում է նախկին դատախազը:

Նրա խոսքով, Յանիկյանի նպատակն էր ստեղծել «հայկական Նյուրնբերգի» պես քննություն, որը աշխարհի ուշադրությանը կհրավիրեր Հայոց ցեղասպանության վրա:

Ի տարբերություն Սողոմոն Թեփերյանի, որը գնդակահարեց Թալեաթ փաշային եւ արդարացվեց Գերմանիայի ատենակալների կողմից, Յանիկյանը դատապարտվել էր ցմահ ազատազրկման:

«Յանիկյանի փաստաբանները դատավորին ասել էին, որ ցանկանում են որպես վկաներ հրավիրել հայտնի պատմաբանների, ցեղասպանությունը վերապրած տարեց հայերի», - գրում է նա:


Յանիկյանն ինքը պատմել էր, որ 8 տարեկանում տեսել է, թե ինչպես են թուրքերը կտրում եղբոր կոկորդը, սպանում ընտանիքի 26 այլ անդամների: Նա ցուցմունքներ էր տալիս հայերենով, իսկ թարգմանիչը Արամ Մարոյանն էր՝ փաստաբան Սան Ֆրանցիսկոյից եւ գրող Վիլյամ Մարոյանի հորեղբայրը:

Թեեւ ատենակալները հուզվել էին մինչեւ հոգու խորքը, տղամարդը դատապարտվեց ցմահ ազատազրկման: 1984թ. նա ազատ արձակվեց եւ ուղարկվեց ծերանոց, չնայած թուրքական կառավարության բողոքներին, եւ մահացավ քաղցկեղից երկու ամիս անց:

Հոդվածում նախկին դատախազն ափսոսանք է հայտնում, որ խիզախություն չի ունեցել օգտագործել բոլոր ապացույցները: Դեյվիդ Մինյերը քննադատում է ԱՄՆ կառավարությանը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու անընդունակության համար, նշելով, թե Կոնգրեսում Ցեղասպանության ճանաչման շանսերը նվազագույն են:

«Կոնգրեսն, անխոս, կգնա ավելի անվտանգ ճանապարհով, ինչպես ես ժամանակին վարվեցի Յանիկյանի դատաքննությանը: Եւ կրկին ճշմարտությունը կդառնա նպատակահարմարության գոիր», - ասել է Մինյերը:

Ահաբեկիչներից էլ վատ. Թուրքիան ոչնչացնում է Սիրիայի համաշխարհային ժառանգությունը՝ արամեական Այն Դարա տաճարը



Դամասկոսում հայտարարել են, որ հունվարի 28-ին Սիրիայում քրդերի դեմ ռազմական գործողությունների ժամանակ թուրքական ուժերը ոչնչացրել են երկաթե դարի ժամանակաշրջանի Այն Դարա տաճարը: Սիրիայի կառավարությունը եւ ռազմական դիտորդներից մեկը հայտնել են, որ թուրքերի կողմից Աֆրինի քրդերի գնդակոծման ընթացքում հնագույն Այն Դարա տաճարը վնասվել է: Պատմաբանները կարծում են, որ այս շինությունը կառուցվել է մ.թ.ա. 20-րդ եւ 8-րդ դարերի միջև: Սիրիայի կառավարությունը կոչ է արել միջազգային ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ հնագիտական եւ մշակութային հուշարձանների գնդակոծումը դադարեցնելու համար:



**Հովվուդում «Մուսա լեռան 40 օրը» գրքի
Էկրանավորմանը խանգարել է Թուրքիան.
BBC 3**



Բրիտանական BBC Յոադիոկայանը Մուսա լեռան դիմադրությանը նվիրված հատուկ ռեպորտաժ է պատրաստել, որտեղ անդրադաժ կա ավստրիացի հայտի գրող և դրամատուրգ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի էկրանավորման հնարավորությանը:

Նշվում է, որ 1933 թվականին հրատարակված Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը մեծ հաջողություն ունեցավ, որը պատմում է 1915 թվականին Մուսա լեռան շրջակայքի հայկական գյուղերի «պարտիզանական բանակի» անձնուրաց պայքարի մասին՝ ընդդեմ թուրքական կանոնավոր զորքերի:

«Այդ ժամանակահատվածում ևս 1919 թվականից հետո ավելի քան մեկ մլն մարդկանց զանգվածային սպանությունները թուրքական ժխտողականության արշավի սկիզբ դրեցին: Օսմանյան Կայսրության դաշնակից Գերմանիայում նույնպես ամեն կերպ ժխտում էր իր առնչությունը հայերի կոտորածներին, սակայն Գերմանիայում 1921 թվականին հայերի կոտորածների հիմնական կազմակերպիչներից Թուրքիայի ՆԳՆ նախկին

նախարար Թալեթ փաշայի սպանությունը ֆուրոր առաջացրեց: Հետագա դատաքննությունը խոշոր իրադարձություն էր լրատվամիջոցների համար և բացահայտեց Գերմանիայի կառավարության առնչությունն ու իմացությունը հայերի զանգվածային սպանությունների գործում: Հայերի նախատագիրը քննարկվում էր այդ ժամանակ և շատերը դա համեմատում էին հրեաներին հարցի հետ», - գրել է BBC 3-ը:

Հաղորդման հեղինակ հեղինակ Մարիա Մարգարոնիսը նաև նշում է, որ Վերֆելի գիրքը բազմիցս հայտնվել է արգելվածների շարքում, սակայն այն թարգմանվել է աշխարհի 34 լեզուներով: Նշվում է, որ Հովվուդում փորձեր են արվել ֆիլմ նկարահանել Ֆրանց Վերֆելի գրքի հիման վրա, սակայն դա իրականություն չի դարձել Թուրքիայի կառավարության ջանքերի հետևանքով, որն ամեն կերպ ձախողել է նման ձեռնարկները:

Հասարակական

**Ս.Դ.Հ.Կ.ի և Հ.Յ.Դ.ի տարաձայնությունները
«Իտտիհատ»ի հետ գործակցության հարցում**



Հատված Ստեփան Սալահ-Գիվեանի «Պատասխանատուները» հատորից, որ վերջերս վերահրատարակվել է Երևանում, ԱՆԻ կենտրոնի կողմից:

Եւ այս Բիզանդացիներն էին Հայ ազգի երեւելիները, ընտրեալ ներկայացուցիչները՝ Հայ ազգը ներկայացնողները և «Իտտիհատ»ի հետ Հայ ազգային շահերի անուրով խօսողները: Դրանք էին ժամանակի «երեւելիները», պաշտօնական անձերը, սրանք էին, որ մեր Կուսակցութեան խուլ, ձեռքի տակի հակառակորդներն էին հանդիսացել և ամեն գնով ջանք էին թափում մեզ պարտութեան մատնելու: Բայց մեր կուսակցական փառքը, մեր պատիւը այդպիսիներից ժամանակաւորապէս պարտութիւն կրելու մէջ չէ՞ր կայանում:

«Ազգային մարմինը» ուրեմն գործի սկսեց: Եսայան դպրոցի դահլիճն ենք. հրաւիրուած են բոլոր կուսակցութիւնները և Հայ Ազգային Ժողովի մէջ գոյութիւն ունեցող հոսանքները, իւրաքանչիւրից 2-ական հոգի: Դահլիճին յարակից սենեակները ուկնդիրներով խճողուած են: «Իտտիհատ»ականները մասնաւոր խնամք են տարել, որ իրենց բանբերները ասուած-խօսուածներից բառ անգամ չփախցնեն: Մթնոլորտը ծանր, ելքերականացած է:

Բազմաձև են բոլոր հրախիրեայնները, Ստեփան Էֆենտի Գարայեանը գրաւել է նախագահական աթոռը: Ու սկսեց իր բացման ճառը: Տալիս ենք, համառօտիւ, արտայայտուած գլխաւոր գաղափարները: Նախագահը ասում է.

«Որքան որ անցած դարձած են տեղեկութիւն ունիմ, բայց Ազգիս շահը թոյլ չտուաւ որ անտարբեր մնանք. այս ժողովը հրախիրեցինք, որ ազգային շահերը պաշտպանելու համար լուծում մը գտնէ եւ ազգային պատուոյն վայել թուով երեսփոխաններ տայ»:

Սկսուեց մտքերի փոխանակութիւնը: Վիճաբանութիւնը տաքացաւ:

Բայց որոշ էր. ծանրութեան կէտը, իսկապէս, Ս. Դ. Հնչակեանութեան դիրքը պիտի լինէր. խնդիրը նրա շուրջը պիտի դառնար:

Երբ խօսքը եկաւ թուրքերի մէջ գտնուած կուսակցութիւններին, Ստեփան Էֆենտին ասաց. «Ես կը նախընտրեմ երկու չարիքից փոքրագոյնը. ազգային շահը կը պահանջէ «Իտտիհատ»ականների հետ երթալ քան «Իթիլաֆ»ականների. եւ չեմ գիտեր թե՛ ինչո՞ւ համար Ս. Դ. Հնչակեանները ազգային համերաշխութենէն կ'ուզեն հեռու մնալ»:

Ինձ հետ էր եւ ընկեր Գ. Կոզիկեանը:

Խօսքը իմն էր.

«Ստեփան Էֆենտի՛, ձեր համակիրները եւ համախոհները միասին, այս դաշինքը մտնելուց, նախագահական աթոռի վրայ ձեր բազմելուց առաջ՝ դուք ազգային այդ շահերը արդէն ոտնակոխել, համերաշխութիւնը քանդել եւ այնպէս էլ ներս էք մտել. այնպէս որ, դուք չէք որ այստեղ, ազգային շահերի եւ համերաշխութեան անունով պիտի խօսիք, այլ մենք՝ բացառապէս մենք»:

Սկսեցաւ աղմուկը, ժխտը, բացագանչութիւնները: Հակաճառութիւնները կրքոտ դարձան:

Ստեփան Էֆենտին եւ իր միջավայրը երկրորդ անգամն էր, որ մեր Կուսակցութեան կտրուկ եւ շեշտակի Բանն էին լսում: Խօսակցութեան այդ ձեւին նրանց ակնեջները վարժ չէին:

«Իթիլաֆ»ը անձանօթ է. «Իտտիհատ»ը՝ ծանօթ. գէշ ասկա սահմանադրական է, միւսը չենք գիտեր», պատճառաբանեց Ստեփան Էֆենտին:

«Այո՛, պատասխանեցինք. նա ծանօթ է եւ հենց այդ ծանօթ լինելուն համար է, որ Հայ ազգային շահը հրամայականօրէն պահանջում է նրա դէմ անողոք պայքար մղել, նրա անկումը, տկարացումը անխուսափելի դարձնել, տիրապետական ասպարեզից նրան դուրս նետել: Պատրաստ ենք ամէն տեսակի համերաշխութիւն կնքելու. համերաշխութիւն որ ուղղուած լինէր «Իտտիհատ»ի դէմ»:

««Իտտիհատ»ը եթէ ընկնի, ասպարեզը որի՞ն պիտի մնայ. ո՞վ պիտի գայ նրա տեղը», հարցրեց Դաշնակցութեան ներկայացուցիչ Վահան Փափագեանը:

«Նրա ժառանգը պատրաստելը մեր եւ ձեր գործը չէ, այլ ապրել ուզող Թիւրքիայի. նա տարրեր կը պատրաստէ, եթէ սահմանադրականօրէն ապրելու կենսունակութիւն ունի», պատասխանուեցաւ մեր կողմից:

«Իթիլաֆ»ը ի՞նչ է արել. անոր ինչի՞ն պիտի վստահինք», մատնանշեց Դաշնակցութեան միւս ներկայացուցիչ Ռուբէն Չարդարեանը:

«Իթիլաֆ»ը. դա մի թուրք ուժ է մեզ կործանելու, մեզ ասպազայնացնելու միտումներով լցուած՝ «Իտտիհատ»ի դէմ: Հիմա նրան մեր գործակիցը կարող ենք առնել «Իտտիհատ»ին տապալելու տեսակետով: Իսկ երբ մի օր կը գայ, երբ նա էլ մեր ազգային կենսական շահերին հակառակ դիրք կը բռնէ, այն ժամանակ միասին, ուժերս դէպի նրան կը դարձնենք: Այս րոպէիս նրանից չէ՛ որ վտանգը գալիս է, այլ «Իտտիհատ»ից: Իսկ մեր վստահութիւնը ամէն բանից առաջ մեր մէջ պիտի

տեսնենք եւ ո՛չ թէ այս ու այն թուրք կուսակցութեան: Ապրել ուզող մի ազգ վստահութեան յենակետեր կը ստեղծի ինքնաբերաբար. նա ինքն է որ օրգաններ առաջ կը բերի»: Մեր այս պատասխանը մի քիչ անելի գրգռեց Արամ Բէյ Հալաճեանի ջիղերը: Եւ մէկ առանձին հեզնութեամբ ասաց. «Միթէ՛ դուք չէք գիտեր, որ «Իթիլաֆ»ականներու մէջ շատ յետաշրջականներ կան»:

«Այո՛, Հալաճեան Էֆենտի, գիտենք, ճանաչում էլ ենք դրանց, ասացինք, բայց Սուլթան Համիտի բռնապետութեան օրօք հրամանքը, եղբայրդ, ձեր այսօրուան նախագահ Ստեփան Էֆենտին եւ Հայ Ազգային Ժողովի տասնեակ անդամները ի՞նչ էինք. յեղափոխականներ՝, ասպատամբներ՝: «Իթիլաֆ»ականների մէջ եղածները նոյնքան Համիտի պաշտօնատարներն էին, որոնք որ այն բազմաթիւ Հայ պաշտօնականները, որոնք այսօր իրենց հակահամիտականներ, ազատամիտներ, սահմանադրականներ են ցոյց տալիս»:

Արամ Բէյը անեղացրեց. «Մեր ազգային շահը կը պահանջէ «Իտտիհատ»ին ուժ տալ, ան ինչքան զօրեղանայ, այնքան անելի լաւ: Ան եթէ զօրեղ եղած ըլլար, մինչեւ հիմա քրդերը զսպուած կ'ըլլային եւ մեր հողային հարցն ալ բաւարար կերպով լուծուած»:

Մարմը խոցոտիչ, սպանիչ գաղափարներ էին, բայց նրանք կային դժբախտաբար. եւ պահպանողական, բուրժուազական, աղայական հայ «Իտտիհատ»ական մեծամասնութեան գաղափարաբանութիւնն էին կազմում:

«Մի հարց, ասացի, որ մոռացութեան արդիւնք լինելով, հիմա է միայն մէջտեղ գալիս: Արդեօք Արամ Բէյը եւ Գարայեան Էֆենտին, այստեղ մեզ հետ խօսում են որպէս «Իտտիհատ»ականներ, թե՛ որպէս ո՛րեւէ հայկական հոսանքի ներկայացուցիչներ, չէ՛ որ իրենք կուսակցականօրէն «Իտտիհատ»ականներ են»:

«Ո՛չ. մենք հոս ներկայ ենք, կը խօսինք յանուն Ազգային Ժողովի պատական խմբակի», պատասխանեցին Էֆենտիները:

«Եթէ հակասութիւն, գաղափարների անհամաձայնութիւն ծագելու լինի, դուք՝ «Իտտիհատ»ի անդամ Ստեփան Էֆենտի Գարայեանի՛ եւ Արամ Բէյ Հալաճեանի՛ կողմը պիտի բռնէք, թե՛ հայ ազգային ժողովի ազատական հոսանքի անդամ Գարայեան Էֆենտու եւ Հալաճեան Էֆենտու. - որի՞...»:

Մեր հարցը գալիս էր ներկուած հոգիները մաքրելու:

Յակովբ Էֆենտի Եսայանը, ազգային Ժողովի Կեդրոնի կողմից, որ սկզբից ի վեր մեզ համակիր էր, էլ համբերել չկարողացաւ ու ասաց. «Ախպար, դուք երկու գոյն ունիք. ո՞ր մէկին պիտի հաւատանք»:

Սկսուեցին սուր դիտողութիւններ:

Հարցեր ու պատասխաններ էին, որ իրարու հասցէի թափուում էին:

Մեր խօսքը շարունակելով՝ ծանրացանք այն սխալ ըմբռնումի վրայ, որ հայ հողային խնդիրը չէր լուծուում, քրդերը չէին զսպուում եւ կոտորածները, յափշտակութիւնները կատարուում էին՝ որպէս թե՛ «Իտտիհատ»ի թուրքեան երեսից եւ նրա կամքին հակառակ: Դժուար չեղաւ մեզ՝ փաստերով եւ օրինակներով հաստատել, որ դրանք բոլորը կատարուում էին, բացառապէս, «Իտտիհատ»ի թելադրութեամբ եւ հաւանութեամբ. ամէն ինչ տեղի էր ունենում համաձայն նրա որոշեալ յատակագծին. հետեւապէս, թուրք ազգային այդ գալիին ո՛չ թէ պետք էր ուժեղացնէ, այլ նրա ատամները այժմեանից իսկ փշրէ. որովհետեւ նրա ուժեղացումը մեզ է՛լ անելի վնասակար, է՛լ անելի վտանգաւոր պիտի լինի:

Պաշտպանեցինք եւ այն գաղափարը, որ մենք պատրաստ էինք համերաշխելու, համագործակցելու միմիայն նրանց հետ, որոնք հակա«Իտտիհատ»ական քաղաքականութիւն կ'ընդգրկէին. այլապէս մենք պիտի պահէինք մեր կուսակցական դիրքը եւ

պիտի չցանկանայինք՝ «Բատիկատ»-ի համակիր, կամ նրա հետ գործակցելու կամություն ցոյց տուող ո՛րեւէ մարմնի կամ մարմինների հետ գործ ունենալու,- ազգային կամ այլ ի՛նչ անուն որ նրանք կրեին:

-«Բայց ամբողջ ազգը կ'ուզէ «Բատիկատ»-ի հետ երթալ», ասաց Ստեփան Էֆենտին:

Պատասխանեցինք, որ Հայ ազգը իր ջաղջախիչ մեծամասնության մէջ «Բատիկատ»-ին հակառակ է. նա այդպիսի ցանկություն եւ տրամադրություն բնաւ չունի. եւ Ստեփան Էֆենտին էլ յանձնարարագիր չի տուել այդ ուղղութեամբ արտայայտելու: Աւելացրինք, որ եթէ հայ ազգը այդպիսի մի ձգտում ունենայ իսկ, մենք դարձեալ պարտաւոր չենք զգում մեզ՝ նրան հետեւելու. ընդհակառակը՝ պարտականություն կ'ունենանք նրան լուսաբանելու, համոզելու, որ մեր ուղղութեանը գար: Մատնանշեցինք եւ այն պայծառ իրողութիւնը, որ ազգի մոլորեցնողները, «Բատիկատ»-ին հետեւողները, բացառապէս նրանք են, որ պետական պաշտօնեաներ են եւ նրանից կրծօններ ապահովելու նպատակ ունին:

Մեր եզրակացութիւնը. «Եթէ ձեզանով ներկայացնող հայ ազգը համերաշխում է «Բատիկատ»-ի հետ երթալու, մենք, այդ աղիտաբեր համերաշխութիւնը պատառոտում ենք եւ դա կը լինի մեր Կուսակցութեան պատիւը»:

Մենք դուրս եկանք:

Հետեւեալ օրը դաշնակցական տեղական օրգանը եւ «Բատիկատ»-ի համակիր հայ ուրիշ թերթերը մեզ անուանեցին՝ «Մեծ պառակտիչ»:

Դա մեր կուսակցական պատուանունն էր, նրա անկեղծութեան, հեռատեսութեան վկայականը՝ մեր հակառակորդների կողմից տրուած:

Բայց մենք նրանց ուրիշ անուն չտուեցինք, այլ միայն՝ ազգային շահ ոտնակոխողներ, րոպէի արժէքը, նրա պահանջները չճանաչողներ:

Եւ սա պատահում էր 1912-ին: Սպանիչ, խոցոտող չէ՞ սա:

Մեր Կուսակցութիւնը պահեց իր դիրքը:

Ռամկաւարները սաղմնային կազմակերպութիւն էին սկսել ունենալ Պոլսոյ մէջ: Հաւաքեցինք նրանց գլխաւոր անդամներին միասին, առաջարկեցինք՝ որ իրենք էլ բաժին ստանձնեն Հայ ժողովրդի զինուելու գործի մէջ: Նրանք բացէ ի բաց հրաժարուեցան՝ ասելով որ իրենք գտնուում էին սահմանադրական մի երկրի մէջ եւ չէին կարող այդպիսի վտանգաւոր քայլ անել: Ասացինք, որ զինուելու գործը մեր Կուսակցութեան միջոցաւ անեն, քանի որ վախենում են եւ մենք կը պարտաւորուէինք իրենց մանրամասն հաշիւ տալ: Դրանից էլ հրաժարուեցան: Իրենք համամիտ էին հակա«Բատիկատ»ական ուղղութեան պայքարին, բայց չէին համարձակուում հրապարակապէս դիրք բռնել: «Բատիկատ»-ի զօրեղացման վտանգաւորութիւնը շեշտելով՝ առաջարկեցինք, որ իրենք էլ մեզ հետ միասին կամ առանձին, ինչպէս որ կ'ուզեն, ուժ տան, աջակցին «Իթիլաֆ»ին, սրա հակա«Բատիկատ»ական պայքարի մէջ: Ռամկաւարների այդ ժամանակուայ պարագլուխ եւ իրենց Կեդրոնական Վարչութեան նախագահ՝ Դաւիթ Տէր Մովսէսեանը հետեւեալ բնորոշիչ պատասխանը տուեց. «Ձեր կուսակցութեան դիրքը շատ ճիշդ է, շատ ուղիղ է. բան չունինք ըսելիք. հարկաւ ազգային շահը կը պահանջէ «Բատիկատ»-ի դէմ կռիւ մղել. բայց դուք կրնա՞ք մեզի երաշխաւորել, որ «Իթիլաֆ»ին ուժ տալով կը յաջողենք մեր բնորոշութիւնները ապահովել. կը վախճան որ մեծամասնութիւն շահիլ չկարողանան»:

-Ուրեմն, ձեր վերջին դիրքը ի՛նչ պիտի լինի, հարցնում ենք:

-«Ա՛յո՛ւս այժմ սպասողական. տեսնենք թէ ո՛ր կողմը ուժեղ դուրս կ'ելնէ, այն կողմն ալ կ'երթանք»:

Կսկծալին այն է, որ Պոլսոյ մի քանի մտաւորականները այդտեղ ներկայ էին. եւ այդ իմաստուն, ազգաշահ խելքին էլ հաւանութիւն տուին:

Սուլթան Համիտը մեր երկու սերունդն էր փնացրել:

Հակամարտութիւնը դադար չառաւ:

Այս բոլոր անցուդարձերից յետոյ՝ Դաշնակցականները նորից յաջողեցան Ստեփան Էֆենտի Գարայեանի եւ Հալաճեանների միջոցով ազգային ժողովի մէջ եղող զանազան հոսանքներից հայ ազգային ներկայացուցչական մարմին կազմել եւ այդպիսով յարել «Բատիկատ»-ին ու նրան քուէ տալ, այսինքն նրա տիրապետութիւնը եւ ուժեղացմանը նպաստել:

Կուսակցական յարաբերութիւնները է՛լ աւելի յարուեցան: Գաւառների մէջ, նոյն իսկ, փոքրիկ ընդհարումներ էլ տեղի ունեցան:

Դաշնակցականների կողմից Խաժակը Փոքր Հայքի մէջ ընտրական պայքար կատարեց: Մարգուանի մէջ «Բատիկատ»ական գայմագամի ներկայութեանը, հրապարակային ժողովի մէջ, մի անճոռնի լեզուով, այն միտքն էր պաշտպանել՝ թէ «Առեւանգումները, կանանց յափշտակումները միայն հիմա տեղի չեն ունենում, դա զուգընթաց է պետութիւնների զարգացմանը. դրա ամենալաւ օրինակն այն է, որ կանանց յափշտակութիւնը շատ սովորական մի պատմական երեւոյթ էր թէ Հին եւ թէ Միջին դարերում: Թուրք պետութիւնը ուժեղացելը, «Բատիկատ»-ին համագործակցելը մեզ շատ օգտակար է. որովհետեւ, որքան որ նա ուժովնայ, այնքան էլ աւելի մեծ չափով կարող կը լինի քրդերին սանձել եւ թոյլ չտալ, որ կոտորածներ տեղի ունենան: Ազգային համերաշխութիւնը մոզական գաւազանով խանգարեց Սապահ-Գիլեանը դեռ այստեղ, Փոքր Հայք եղած ժամանակը...»:

-Որպէս թէ՛ ես դեռ Փոքր Հայքում եղած ժամանակա՝ «Իթիլաֆ»ականների հետ համաձայնութեան ձեռնարկած լինէի եւ այդ պատճառով էլ, Պոլսում, իրենց եւ մեր մէջ համերաշխութիւնն էլ այդ նկատումով խզել տուած:

Մեր Գործադիր Յանձնախմբի անդամները բողոքել էին եւ տեղի էր ունեցել ժողովի խանգարումն: Սա մէկ նմոյշն էր: Չուտ իրականութիւնն այն էր, ինչ որ պատմեցինք:

Այսպէս, մենք ճանաչեցինք Հայ Ազգի արիւնքաւոր թշնամուն. չափեցինք, կշռեցինք «Բատիկատ»-ին. եւ մեր ձեռքից ինչ կը գար՝ չխնայեցինք, գործ դրեցինք, աշխատեցինք նրան թուլացնել, տկարացնել, տապալել, նրա գործունէութիւնը անդամաւործել:

Մենք արեցինք այն, ինչ որ կարող էինք, ի՛նչ միջոցներ որ մեզ տրուած էին:

Իրերը եկան հետզհետէ պայծառ կերպով ցոյց տալու, որ մենք կատարեալ իրաւունք ունէինք նրա հանդէպ անողոր լինելու եւ մեր դիրքի մէջը յարատեւելու:

Ս. Դ. Հնչակեանութիւնը այդ տեսակէտով, իր պարտականութիւնը լի ու լի կատարեց:

Գործը՝ որ մենք գործեցինք, ամենայնիւ համապատասխանում էր իրերի բնութեանը եւ պատմութեան պահանջին:

ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԿԵՏԸ

««ԻՏՏԻՀԱՏ»»-Ի ԿԱՏԱՂՈՒԹԵԱՆ ՓՐՓՈՒՐԸ.-

«Բատիկատ»ը՝ ամէն քայլափոխին՝ իր դէմ ունեցաւ Ս. Դ. Հնչակեանութիւնը, որին օգնութեան հասան, որոշ չափով, այն բոլոր ուժերը, որոնց մասին խօսուեցաւ վերեւում: Ամենից աւելի զօրավիգ եղաւ «Իթիլաֆ»ականութիւնը: Բայց ակնյայտնի իրականութիւնն այն էր, որ այդ բոլոր շարժումների, այդ ամէն ընդդիմադրութիւնների առաջնորդող ոգին, վարիչ ուժը, կեդրոնական առանցքը մեր Կուսակցութիւնն էր:

Մեր Կուսակցութեան եւ Թուրք Ազգայնականութեան հակամարտութիւնները աւելի խիստ կերպով աչքի էին ընկնում՝

մանաւանդ գաւառների մէջ: Այդ տեղերում՝ երկու կողմերի յարաբերութիւնները աւելի քան լարուած էին. կրքերը գրգռուած:

Բայց մենք թուրք ազգայնական կուսակցութիւնը չհարուածեցինք միայն Հայ ազգային շրջանի մէջ. դա մեզ բաւականութիւն չէր կարող տալ. եւ «Բոտիհատ»-ի կատարութեան փրփուրն էլ այնքան ուժգին չէր լինի, եթէ խնդիրը միայն դրանով վերջացած լիներ: Մենք նրա դէմ դուրս եկանք եւ բուն թրքական միջավայրի մէջ: Նրա ատամների կրճտոցը աւելի այդ պատճառով եղաւ: Շատ տեղերում, նրա տեղական ակումբների ջանքերը ո՛չ միայն ամլութեան դատապարտեցին, այլ նրանց փակուելու էլ պատճառը մենք դարձանք՝ մեր ուժեղ պրոպագանդայի շնորհիւ: Եւ դա մեզ մասնաւորապէս յաջողուեց՝ Քեամիլ Փաշայի Սատրապութեան օրօք:

Յոյց տալու համար, այդ տեսակետով, մեր ձեռք բերած բարոյական ազդեցութիւնը, բաւական է յիշել այն իրողութիւնը որ Գոնիան իր աթոռահիստը դարձնող Հալիմ Չելեպին որ Մելջուկեանների արքայական տան մնացորդներիցն է եւ իր տոհմը թրքաց Սուլթանների գահակալութեան ժամանակ՝ նրանց սուրը կապելու պատմական առանձնաշնորհումն ունի՝ յաճախ, շաբաթներով, մեր գործիչներին իր տանն է հիւրասիրել եւ նրանց պրոպագանդային ամէն դիրութիւններ ընծայել:

Գոնիայի շրջանի մէջ, «Իթիլաֆ»ականների օգնութեամբ, ««Բոտիհատ»»-ի ազդեցութիւնը կատարելապէս հողի հաւասարեցրինք եւ իր դէմ խորին ատելութիւն, անսահման պժգանք ստեղծուեցաւ:

Գաւառներում, մեր ակումբները մի տեսակ դիւանատների, փաստաբանական գրասենյակների բնաւորութիւն էին ստացել: Այնտեղ էին գալիս ո՛չ միայն թուրք, քիւրտ, չէրքեզ, աւշար, յոյն գործաւորները՝ իրենց կրած գրկանքների համար օգնութիւն խնդրելու, այլեւ՝ բոլոր նրանք, որոնք «Բոտիհատ»ական կառավարութեան դէմ ո՛րեւէ գանգատ եւ բողոք ունէին: Տիրող Կուսակցութեան կողմից անիրաւուած պաշտօնատարների՝ մեր Վարիշ Մարմինն եւ Մասնաճիւղերի Վարչութեան դիմելը շատ սովորական էր: Փաստ էր՝ որ ամէն շրջան որոշ կերպով գիտէր, տեղեակ էր՝ թէ ««Բոտիհատ»»-ի դէմ պայքարող, նրան տապալել ուզող մի Կուսակցութիւն կար: Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան բարոյական արժէքը դրա մէջն էր: Եւ հէնց այդ իրականութիւնն էր որ «Բոտիհատ»ականների բերանից անգուսպ սրտմտութեան լորձուք էր հոսեցնել տալիս մեր դէմ:

Մի քանի նմոյշներ:

Էրպաաի շրջանի Թուրք հասարակութիւնը Միւֆտի էր ընտրել Ալի անունով մէկին, որ հակա«Բոտիհատ»ական էր եւ բարեբարոյ, առաքինի մի մարդ: Նա սրտանք բարեկամ էր եւ Հայերին: Հակառակ միաձայնութեամբ իր ընտրուելուն՝ «Բոտիհատ»ական Գայմագամը, Միւթէսարքի էր Վալին նրա թղթերը պահել էին եւ Շէյխ-Իւլ-Իպսամութեան չէին ուղարկել: Տասնեակ գիւղերից՝ թուրք հասարակութեան պատգամաւորութիւնը մեզ ներկայացաւ, գործուած այդ ապօրինութեան դէմ բողոքելու եւ լուծում տալու միջոց խնդրելու: Մեր ներկայութեանն էր, որ «Բոտիհատ»ական պետական պաշտօնեաները ամենաձանր նախատալից բառեր ստացան թուրք հասարակութեան ներկայացուցիչներից եւ սակայն ստիպուեցան լռել ու պատշաճութիւնից չանցնել: Եւ դա ազգայնական կուսակցութեան բարոյական անկման, ապականութեան մի նմոյշն էր: Ու մենք չէինք, որ այդ եւ դրա նման շատ առիթներից չօգտուեցանք՝ մեր պրոպագանդայի համար:

Պալքէտէի մէջ՝ «Իթիլաֆ»ական ակումբը երկու օր կատարեալ պաշարման դրութեան էր ենթարկուել: «Բոտիհատ»ական միւթէսարքի Սամի Բիֆաթ Բէլը ամէն գնով ուզեցել էր

հիմնայատակ անել այն: Շրջականներից անգամ թուրք ազգաբնակչութիւնը օգնութեան էր հասել. որովհետեւ «Իթիլաֆ»ական Էօմէր Էֆէնտին, իր ընկերներով, որոշել էր ընդդիմադրել՝ ինչ որ էլ գալու լինէր: Վերահաս արինահեղութեան առաջն առնելու համար՝ նախկին Շէյխ-Իւլ-Իպսամ Մուստաֆա Քեագիմը («Բոտիհատ»ական) միջամտել էր, բայց անկարող էր եղել գործը հաշտութեամբ գլուխ հանել, որովհետեւ «Իթիլաֆ»ականները նրա միջամտութիւնը բացէ ի բաց մերժել էին: Տեղական Թուրք «երեսելիների» եւ «մեծամեծների» առաջարկութեամբ՝ երկու կողմերը մեզ դիմեցին՝ խնդիրը կարգադրելու համար: Եւ մենք կարգադրեցինք: Դա նուազ բարոյական ապտակ չէր, որ շառաչեց տեղական կառավարութեան եւ «Բոտիհատ»-ի երեսին: Թուրք ժողովուրդը դրանից քիչ եզրակացութիւններ դուրս չբերեց: Սա էլ պատահեց 1912-ին, եւ մենք չուշացանք մեր հարուածի ծանրութիւնը զգացնել տալու՝ ուրիշ շատ դէպքերում էլ:

Նիկոմիդիայում հրապարակային մի բազմամարդ ժողովի մէջ թարգմանի միջոցով կատարած մեր դասախօսութիւնից յետոյ՝ խօսք առաւ տեղական մի փայթեցաւոր եւ կարդաց իր գրաւոր ճառը: Նրա մի քանի պարբերութիւնները միայն. լսեցէք.- «Ամենաբարձրեալն Աստուած Մովսէսին ուղարկեց Իսրայէլացիներին ազատելու Փարաւոնի ձեռքից. նոյն Աստուածն էլ Ս. Դ. Հնչակեաններին ուղարկեց՝ մեզ «Բոտիհատ»-ի գոլումներից փրկելու...»: Եւ այդ աստղը մի միւսիւման կրօնական էր՝ մօտ 2000 ունկնդիրների առաջ: Ներկայ «Բոտիհատ»ականները ականջալուր եղան՝ բայց ձայնաձայնու հանել չկարողացան:

Դեռ ո՛չ մի խօսք չենք ասում այն մասին՝ թէ ինչպէս, շատ յաճախ, գաւառներում, Յոյն հասարակութիւնը իր կարգախօսը գալիս ստանում էր մեր մասնաճիւղերից. եւ իր տեղական գործերի համար՝ շարունակ նրանց էր դիմում:

Սրանք, հարիւրների միջից, փոքրիկ նմոյշ-իրողութիւններ են՝ ցոյց տալու համար, թէ մեր Կուսակցութիւնը բարոյական ի՛նչ մեծ վարկ էր ձեռք բերել նոյնիսկ թուրք եւ ա՛յլ շրջանների մէջ. եւ թէ ինչու համար թուրք ազգայնական այնքան թոյն էր կուտակուել նրա դէմ:

Հարցը, ուրեմն, չէր վերջացրել Օսմանեան Խորհրդարանի դռները մեր առաջ փակելով. մենք ծորել էինք ամէն տեղ, ուր ամենափոքր մուտքը, շաւիղ էինք գտել:

Մեր կուսակցական հոսանքն էլ՝ արդէն, աստիճանաբար, վարարել, յորդել, ափերից դուրս էր եկել եւ մակընթացութեան մէջ մտել: Իրողութիւնները այդ անհրաժեշտ, անխուսափելի էին դարձել:

Ուրիշ պարզաբանող փաստեր էլ:

Տամատ Սալիի Փաշան՝«Իթիլաֆ»ական, նա՝ որ տղամարդի պէս գլուխը բարձր մահախիւներին մօտեցաւ եւ պարանը ինքը իր վիզն անցկացրեց- պատուոյ խօսքի երդումով մեզ ասել էր՝ թէ ի՛նչպէս «Բոտիհատ»ականների վարիչ շրջանների մէջ որոշում էր կայացել Հայերին անպատճառ կոտորել՝ նոյն իսկ Հայաստանը Թիւրքիայի տիրապետութիւնից դուրս գալու պայմանով: Այդ խօսքը տարածուել էր նոյնիսկ պալատականների շրջանում: Ամէն շատ ու քիչ «Բոտիհատ»ական այդ որոշման կողմնակից էր հանդիսացել:

Նիկաւարի գայմագամ՝ Իսհան Բէլը եւ շրջանային զինուորական հրամանատար Սաքիի Բէլը մեզ յանձնեցին (1912) մի տրցակ շատ թանկագին վաւերաթղթեր. դրանք բոլորը մասամբ «Բոտիհատ»-ի Կեդրոնական Վարչութեան եւ մասամբ էլ՝ «Բոտիհատ»ական կառավարութեան կնիքով են կնքուած: Այդ բոլորը վերաբերում են այն տակտիկային եւ վարուելակերպին, որ թուրք ազգաբնակչութիւնը եւ կառավարիչները պիտի ունենային դէպի Հայ Ազգը ընդհանրապէս եւ դէպի Ս. Դ.

Հնչակեանությունը՝ մասնաւորապէս: Ընտրություններին առթիւ եղած գրությունները եւ հեռագրաթղթերը շատ երկրորդական տեղ են բռնում. գլխաւորը ընդհանուր քաղաքականությունն է: Ժամանակին դրանք բոլորը հրատարակութեան կը տանք: Այժմ միայն մի նմոշ.- «...Առաջին առթիւ, երկիրը մաքրեցէք. Ս. Դ. Հնչակեաններից...: Հայերին չինայէք. Կենդանի շունչ չթողնէք. կայք, գոյք՝ ամէն բանի տիրապետեցէք...»:

«Այս ձեզ տալիս եմ որպէս վաւերաթուղթ. որպէսզի օր առաջ ձեզ էլ, մեզ էլ ազատէք այս ճիվաղների ձեռքից», ասաց՝ յուզուած Իսահան Բէլը:

«Իտտիհատ»ական մեծերին սատկեցնելը Հայերի ազգային պարտականությունն է». աւելացրեց Սաբիի Բէլը եւ մանրամասնեց հայաջնջութեան այն ծրագիրը, որ «Իտտիհատ»ականների սեւեռուն գաղափարն էր, կարծելով՝ թէ մենք այդ մասին տեղեկություն չունէինք:

Կեսարիայի Միլթեսարքի օգնականը, որ մի կտրիճ եւ ուսեալ Ալբանացի էր, ի ներքուստ «Իտտիհատ»ին ատող, Կարապետ Աղա Ճամճեանի (նրան կախեցին մեր կուսակցական գործերին օգնած ինկելու համան.) միջոցով մեզ հետ մտերմանալուց յետոյ, որպէս խոստովանութիւն, 1911-ի ամբարն ասել էր. «...Եթէ այս «Իտտիհատ»ականները մնան, սրանք Հայ Ազգի գլխին նոր եւ անելի խիստ փորձանքներ յառաջ պիտի բերեն: Ուստի ձեր ազգի փրկութեան տեսակէտից՝ շուտով աշխատեցէ՛ք ձեր օձիքը սրանց ձեռքից ազատել...»: Եւ դա երեւոյթներից, իրերի տրամաբանությունից եզրակացնողի անհատական կարծիք չէր, այլ ստոյգ տեղեկություն, որ հիմնուած էր իր ձեռքին ունեցած պաշտօնագրերի վրայ. ինչպէս որ մեզի հաւաստեց՝ պատուոյ խօսքով:

Սամսոնի մէջ, 1912-ին, երկրաչափ Սամի Բէլը, որին դեռ Պարիզից էինք ճանաչում, մեզ մանրակրկիտ տեղեկություններ էր տուել «Իտտիհատ»ականների կազմած դաւադրական ծրագրի մասին, ինչ որ վերաբերում էր Հայերին կոտորելու: Քեամիլ Փաշայի կառավարությունը վարկաբեկելու եւ կառավարութեան դէկը նորից «Իտտիհատ»ին յանձնելը անհրաժեշտութիւն նկատել տալու համար՝ ուրիշ միջոց չէր խորհուել, եթէ ոչ՝ Հայերին ջարդելը:

Սրանք կասկած չվերցնող, ստուգապատում տեղեկություններ են, ճշգրիտ եղելություններ՝ բարձր ամէն կասկածից, որոնց մի մասն ենք այժմ միայն հրատարակութեան տալիս՝ մեր թեզը պարզաբանելու տեսակէտով. մնացած ամբողջությունը դուրս կը գայ մեր՝ «ՓՈՔՐ ՀԱՅԷԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐԻՑ» անունով գրքի մէջ:

Այս բոլորը գալիս են որոշ կերպով հաստատելու, թէ Թուրք ազգայնականությունը մարմնացնող Կուսակցությունը կրքերի ի՛նչ աստիճան բորբոքումի մէջ էր գտնուում դէպի Հայ ազգը ու մեր Կուսակցությունը:

Դրանից յետոյ էլ, վերջին եւ երրորդ անգամ Փոքր Հայք եւ Սեւ Ծովի տաճկական ափերը այցելելով՝ եւ կուսակցական ու մեզ համակիր սահմանների մէջ պէտք եղած կարգադրությունները անելով՝ այլեւս առաջին եւ հրամայական պարտականություն համարեցինք ամէն ինչ որոշ կերպով ներկայացնել ամբողջ Հայութեան: – Այդ սրտակեղեք ճիշդ մեր Կուսակցությունը իր ժամանակին արձակեց՝ ամենայն ուժգնութեամբ:

«ՀՆՉԱԿ»-Ի ԱՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ.- Նոր իրողություններ եւ դէպքեր արձանագրելով՝ առաջ դրուեցաւ վերահաս վտանգի եւ բնաջնջման իրականությունը:

Փաստուեցաւ, որ ուրիշ միջոց չկար, եթէ ոչ՝ զենք, հրանիւթ, ինքնապաշտպանություն, յետափոխական գործունէություն:

Ատուեցաւ, որ սխալ՝ գլխովին սխալ էր այն գաղափարը, թէ «Իտտիհատ»ը սահմանադրական կառավարություն մարմնացող մի կուսակցություն էր եւ նրա մէջը մինչեւ անգամ

ձախակողմեաններ էլ կային՝ յանձին Թալաթի, Էնվերի, Ջալիլի, Ջեմալի...:

Կոչ եղաւ պարտականություն, վեհագոյն, հրամայական, անկետաձգելի պարտականություն ստանձնել եւ դիրք բռնել:

Դեռ ուշ չէր:

Առնենք «Հնչակ»ի թիւ 3-ը, 1913. բանանք 6րդ էջը՝ «ՓԱՍՏԵՐ ԵՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ» բանասիրականից, կարդանք:

«...Մի անգամ ընդ միշտ, որպէս անվիճելի ճշմարտություն, աչքի առաջ պիտի ունենալ հետեւեալը.- երբ ամենափոքր յարմար թոպէին ներկայանայ եւ համոզուած լինի, որ իր արարումունքը դիւրութեամբ կարող է մարսել, թուրք ազգայնականությունը՝ որի ձեռքին է այսօր երկրի կառավարական գործը, առանց ստատանուելու, որպէս պատմական անհրաժեշտութիւն, անխնայ կերպով պիտի կոտորի Հայերին: Եւ այս անգամ աւելի՛ անողոք, քան 1895-1896-ին. աւելի սաստկութեամբ, քան Ատանայի եղեռնը: Ջարդի հոգեբանական դրությունը մնայուն է եւ ունի իր խորին արմատները, որ հեշտութեամբ չպիտի կարելի լինի թուրք ազգայնական պինդ գլխից դուրս քաշելու:

«Սա էլ որոշ է, որ թուրք նացիոնալիզմի Հին ու Նոր ներկայացուցիչները ո՛չ մի կերպ չեն ուզում հաշտուել Հայ ժողովրդի գոյութեան, բարգաւաճման, կենսունակութեան գաղափարի հետ: Նրանց ընդհանուր տակտիկան է՝ «Սահմանադրական» պատրանքների մէջ Հայերին օրօրելով՝ քայքայել, ոչնչացնել՝ մանաւանդ տնտեսապէս, քաղաքականապէս արդէն ոչինչ չունենալով:

Սա ժայռ իրականություն է, որ պէտք է տեսնել, ճանաչել եւ ըստ այնմ դիրք բռնել: Իրողությունները, կասկածները, ենթադրությունները ճշդելու համար՝ պատմութեան պիտի դիմել. իսկ մեզ այդ անսքող ճշմարտությունն ասողը՝ ինքը պատմությունն է»:

Թէ մեր քաղած տեղեկություններով, ձեռքի ունեցած փաստաթղթերով որքա՞ն իրաւունք ունէինք այդ եզրակացութեանը յանգելու եւ դրանով ինչքա՞ն մօտիկ էինք իրականութեանը.- յետագայ աղետները եկան այդ բոլորը ցոյց տալու բոլոր նրանց, որոնք դեռ դրանից յետոյ էլ շարունակեցին պահպանողականութեան, անտարբերութեան, չզգոքութեան, անպարտաճանաչութեան քղանցքի տակ պահելու:

Ու ի՛նչ էր ասում, ի՛նչ թելադրում, ի՛նչ պէտք էր անել.- ի՛նչ էր պարտաճանաչ, գիտակից, ապրիլ ուզող ամէն Հայի վեհ պարտականությունը, մի պարտականություն՝ որ բոլորում էր թոպէի, կեանքի իրական պահանջներից: Ահաւասիկ այդ կտորն էլ. դա էլ կարդանք:

«...Պատրաստ ինքնապաշտպանութեան.- դա է քաղաքացիական գիտակցութեան այն վեհագոյն պարտականությունը եւ մարդկային է՛ն տարրական իրաւունքը, որ թոպէն բացարձակ, անկետաձգելի եւ հրամայական անհրաժեշտութիւն է դարձրել՝ այս եւ գալիք օրերի համար:

Ասիայում պարփակուող թուրք ազգայնականությունը մեզ պիտի չխնայի՝ ո՛չ մի պայմանի տակ. նրա շողորթությունները, սուտակասպաւորությունները, մեղրածորան յայտարարությունները բոլորն էլ միջոցներ են միայն մի նպատակի հասնելու, այն է՝ ամէն գնով Հայերին մէջտեղից վերցնել, թէկուզ փոքրիկ ցնցումներով, թէկուզ ասիական մի քանի նահանգներ կորցնելով:

Միշտ մտածենք այդ մասին. բայց երբեք չխօսենք»,- Գամբելտուայի այդ խօսքը թուրք ազգայնականի մշտական սեւեռուն, մոլիչ գաղափարն է՝ Հայերին կոտորելու, բնաջնջելու նկատմամբ:

Մենք էլ, ուրեմն, այդ մասին շարունակ մտածենք, ժայռ իրականությունը աչքից բաց չթողնենք եւ ըստ այնմ կազմ ու պատրաստ գտնուենք՝ առանց սին բառերի, ցնորական երագների մթնոլորտի մէջ ընկնելու:

Ինձը իւր խայտուցները չի փոխիլ. երբ 3-4 հարիւր տարի Եւրոպայում, քաղաքակրթութեան շէմքին վրայ ապրող թուրք ազգայնականութիւնը իւր խայտուցներից շերտիկ անգամ չպակասեցրեց եւ այնտեղ իր սեպհական մեղքերի ծանրութեան տակը թաւայեց՝ մինչեւ վերջ անուղղայ մնալով. – Ասիայո՛ւմ այդ հրաշքը պիտի կատարուի: Նա տեղ է կը շարունակի մնալ նոյն «գազանը», նոյն մեթոտներ գործադրողը, ինչ որ էր դարեր առաջ: Պատմութեան տուեալները անպատիժ կերպով չի կարելի ուրանալ: Մեր արեան ճահիճները այդքան շուտ չմոռանանք:

Ժամանակակից կեանքի պահպանութեան առաջին ազդակը, առանցքն ի՛նչ, սուրը, գէնը, հրանիւթն է: Աշխարհի ո՛ր մէկ անկիւնը, պատմութեան ո՛ր էջը որ քրքրէք, – այդ կը տեսնէք: Երբ այդպէս է, ապա մենք էլ մեր ինքնապաշտպանութեան, մեր հաւաքական գոյութեան նախապայմանը ամէնից առաջ այդ գործօնների վրայ պիտի դնենք. բացառութիւն կազմել չենք կարող: Եւ ո՛ր տեղի իրականութիւնը այդ թէգի վրայ կեցած չէ այս անցողական շրջանի մէջ: Գարունը չի գալիս ո՛չ ցանկութիւններով, ո՛չ էլ քարոզներով. եւ մենք չենք, որ հակաբնականը բնականի պիտի վերածենք:

Մեր սկիզբը, մեր վախճանը մեր մէջ, բացառապէս մեր մէջ պիտի փնտռենք. – ապրել ուզող ազգերի նշանաբանը դա է՝ փոթորիկների, մրրիկների այս օրերիս մէջ. դա դժբախտութիւն է. բայց հէնց դա՛ էլ այն ժայռ իրականութիւնն է, որ չտեսնող կոյրերի գլուխն է փշրում»:

Պարզ է, ծածուկ խորշ չի մնացել. ժամանակի պահանջը լի ու լի կերպով արտայայտել, բացատրուել է: Մնում էր գործադրութեան եղանակը, պայմանները:

ԲԱՆԺԱՆԵԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ.– Իրերի այդ դրութիւնը իր անմիջական ազդեցութիւնն ունեցաւ Բալքանեան շրջաններում: Աստեղ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան տեղական պատասխանատու մարմինների միջեւ մի համաձայնագիր ստորագրուեց 1913-ի Յունիսի վերջերը: Պահանջը այդպիսի համաձայնութեան՝ այնքան ակնհայտ էր, որ մեզինք մի առանձին աշխատանք չիւցեց:

Բուլղար պետական շրջանների եւ Ժողովրդի տրամադրութիւնը, այդ ժամանակ, շատ լաւ էր դէպի Հայ Ժողովուրդը եւ Հայկական Դատը: Մեր Յեղափոխական պատմութիւնը այդ ուղղութեամբ բաւականին հող էր պատրաստել: Հայ կամաւորական գործն էլ աւելի բարձրանալուն:

Այստեղից շատ մեծ դիւրութեամբ կարելի պիտի լինէր, եւ պատասխանատու շրջաններից էլ խոստումներ եղած էին՝ մեծ քանակութեամբ զանազան տեսակի զէնքեր, ռազմամթերք հայթայթել եւ երկիր՝ Թուրքիա ներմուծել:

Դրա համար էլ բացարձակ անհրաժեշտութիւն էր երկու Կուսակցութիւնների համերաշխ գործակցութիւնը, որպէսզի ո՛չ միայն իրարու չխանգարէին, այլ միակամ ուժով գործի լծուէին եւ աշխատէին պահանջուած գործը գլուխ բերել: Այդ նպատակով, ահա, երկու Կուսակցութեանց Բալքանեան շրջանը հասկացողութեան եկաւ:

Այդ համաձայնագիրը, ժամանակին, իր վրայ շատ խօսեցնել տուեց. նա թուէր պահանջի արդիւնքն էր. երկու կողմերի, մասնաւոր Թուրքիայի մէջ եղող կազմակերպութիւններին էր մնում այլեւս նրանից օգտուելը. գործի, ճանապարհի մի գլխաւոր մասը հարթուած էր:

ԹԻԷՐԻ ԽՕՍԹԸ.– Իր ժամանակին՝ ոչ որ այնքան չէր տարուել Ազատութեանց Սկզբունքով, որքան Նապոլէոն Գ.-ը: Ազգութեանց սկզբունքի այդ տեսաբանը համոզուած էր, որ խաղաղութիւնը, յառաջադիմութիւնը այլեւս անխափան կը լինի, եթէ ճնշուած բոլոր ազգերը ազատագրուին եւ իրենց անկախութիւնը ձեռք բերեն: Դա նրա սեւեռուն գաղափարն էր եւ իր պետական մեքենան, քաղաքականութիւնը այդ ուղղութեամբ էր գործում, քայլեցնում:

Հաւատարիմ իր ընդգրկած սկզբունքին, ոչ որ այնքան չաջակցեց, չօգնեց Բիսմարկին՝ Միացեալ Գերմանիան ստեղծել, առաջ բերելու գործին մէջ՝ որքան Նապոլէոն Գ.-ը: Սաղովոյի յաղթութեան վրայ, 1866-ին, երբ Աւստրիան ջաղջախուեց, Նապոլէոնը աւելի հրճուեց, քան Բիսմարկը. նա իր սկզբունքի յաղթութեան տօնը համարեց այդ. հարկաւ երբեք չէր կարծում, որ այդ միեւնոյն սկզբունքը, այդ միեւնոյն տակտիկան եւ գաղափարը՝ Բիսմարկը մի օր էլ իր դէմ կդարձնէր: Ու եկաւ «Ահռելի տարին» (1870-1871), երբ Ֆրանսիական կայսրութեան աւերակների վրայ՝ Վերսալում հռչակուեց Գերմանական Կայսրութիւնը:

Սոցիալիստական տիրապետութիւնը, կոմունիզմը ջաղջախելու համար՝ յաղթող Պրուսիայի ուժերին դիմող Թիէրը այդ ժամանակի քաղաքական խնդիրների մասին անդրադառնալիս՝ ցոյց է տուել՝ թէ ի՛նչպէս Նապոլէոն Գ.-ը սխալում էր եւ չէր հետեւում Ֆրանսիական աւանդական քաղաքականութիւնը. նա ինքն էր արել, պատրաստել այն տապալարը, որ մի օր Ֆրանսիայի դէմ պիտի դառնար:

Թիէրը հետեւեալ նմանութեամբ է խօսել. «Յաճախ տեսնուել է, որ մարդիկ իրենց գլուխը պատին զարկելով՝ ջաղջախել են. բայց դեռ տեսնուած չէ, որ մարդիկ իրենց ձեռքով պատ շինեն՝ իրենց գլուխը նրան զարկել, ջախջախելու համար»:

Որքան որ ազգերի ազատագրութիւնը պատմութեան անհրաժեշտութիւնն էր եւ ո՛չ մի ուժ չկար, որ նրա առաջն առնել կարողանար, այնպէս որ խաբող, նենգող, յաղթող Բիսմարկներ, Մօթլէներ, խաբուող, պարտուող Նապոլէոն Գ.-ներ եւ Օլիվիէներ ստեղծող, առաջ բերողն էլ նա էր. այնու ամենայնիւ, քաղաքագիտական տեսակէտով, Թիէրի դիտողութիւնը ճիշդ էր. ժամանակի հեռատես, ներիւն քաղաքագէտը միջոցներ ձեռք պիտի առնէր, որ Ազգութեանց սկզբունքը մի օր էլ Ազգայնականութեան թոյնի շտեմարան չդառնար:

Ֆրանսիացի քաղաքագէտը՝ Թիէրը՝ Անգլիա, Ռուսիա ճամբորդելով՝ պատմում էր կսկծալից, մորմոքած սրտով իրենց «Ահռելի տարուան» մասին. բացատրում էր՝ թէ ի՛նչպէս իր նախորդները կառուցին նոյն այն պատը, որին իրենք յետոյ ստիպուեցան իրենց գլուխը զարկել, ջախջախել:

«Իտտիհատ»ական պատի կառուցման գործի մէջ՝ ո՛վ էր աւելի աշխատել, քրտնել, շունչ, ջանք վատնել, նրան դրամական, նիւթական միջոցներ տուել. ո՛վ էր «Իտտիհատ»ական պարիսպը ստուարացրել, ամրապնդել. ո՛վ էր սատարել, նպաստել, որ գանձն Թալաթները, Էնվէրները, Ջալիլները հերոսական ծիրանիներով պարուրուէին. ո՛վ էր «Իտտիհատ»ական շէնքի հաստատութեան գործին ուժ տուել. պատմութիւնը միայն մի անստգիւտ իրողութիւն կարող է մատնացոյց անել, այն, որ Հայ ազգից՝ դրա մէջը չկայ միայն եւ բացառապէս Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը: Դժբախտաբար, սխալ ուղղութեամբ առաջնորդուող Հայ Ուժն էլ՝ իր կողմից՝ չինեց, կառուցեց մի պատ, որպէսզի յետոյ իր գլուխը նրան զարկէր:

Բայց այդ պատը պէտք էր փլցնել ամէն գնով. դա անհրաժեշտութիւն էր դարձել:

Դեռ ամէն բան կորած չէր, ժամանակ կար. առանց Թիէրի նման յուսահատութեան անձնատուր լինելու՝ եւ էլ աւելի նորանոր սխալների մէջ գլորուելու, հարկաւոր էր ստեղծագործական աշխատանքի եւ արագ գործունէութեան դիմել:

Մեր անխախտ համոզումն էր, որ Հայ ազգը «Իտտիհատ»ական պատը փլցնելու ուժը, կարողութիւնը ունէր. ինչ որ պակասում էր նրան, դա իրերի բնութեան ըմբռնումը, հասկացողութիւնն էր:

Այդտեղ ուրեմն, նորից մեր Կուսակցութիւնը պարտականութիւն ունէր կատարելիք:

Նա խնդիրները, իրերի իսկական ընթացքը դարձեալ պիտի բացատրէր, լուսարանէր, գործէր, իր ստանձնած կոչումնին համաձայն:

ارآن، آذربایجان، جنایت و توسعه طلبی

خلاصه ای از تاریخ ارآن و سرنوشت شوم آن

تألیف: ادیک باغداساریان (۱. گرمانیک)

(۵)

وقایعنگاری تاریخ ارآن

پیش از میلاد

- سده ۶- حکومت هخامنشی در سرزمینی که بعداً ارآن نام گرفت. تحت نام ساتراپ نشین یازدهم «کاسپانه».
- ۳۳۱ پ. م. برای اولین بار اقوام آرانی در تاریخ ظاهر می شوند که به فرماندهی آتروپاتن در جنگ گاو گامل در کنار سپاه ایران جنگیدند.
- ۳۳۰-۳۳۱- سقوط حکومت هخامنشی و خود مختاری ارآن.
- آغاز سده اول- تشکیل حکومت ارآن.
- ۶۹- آغاز جنگ ارمنستان و روم که سپاهیان آرانی نیز در کنار سپاه تیگران بزرگ پادشاه ارمنستان می جنگیدند.
- ۶۹- ۶ اکتبر، نخستین برخورد آرانیان با سپاهان رومی.
- ۶۶- انعقاد پیمان صلح تیگران بزرگ با پومپئوس.
- ۶۵-۶۶- آرانیان به فرماندهی اوروسس پادشاه ارآن به سپاه پومپئوس حمله کردند.
- ۶۵- حمله پومپئوس به ارآن.
- ۶۵ بهار- جنگ آرانیان با رومیان به فرماندهی کسپوس برادر پادشاه ارآن در ساحل چپ رود آلازان.
- ۶۵- تابستان، جنگ دوم آرانیان با رومیان به فرماندهی پادشاه.
- ۶۵- تصرف ارآن توسط پومپئوس.
- ۶۱- خودمختاری ارآن.
- ۳۷-۶۱- دوران خود مختاری ارآن.
- ۳۷-۵۵- ایجاد اتحاد ضد رومی به ابتکار آرتاوازد شاه ارمنستان و پیوستن ارآن، گرجستان و آتورپاتکان به آن.
- ۳۷-۵۵- سلطنت زوبروس پادشاه ارآن.
- ۳۷- یورش رومیان به سرکردگی کاندیوس به شرق، تصرف گرجستان و ارآن. ارآن دگر بار تحت یوغ روم قرار می گیرد.
- ۳۷- پ. م. تا دهه ۷۰ میلادی- دوران تسلط رومیان بر ارآن.

پس از میلاد

- ۶۳-۱۴ میلادی- شرکت ارآن در مناسبات پارتیان و رومیان.
- ۳۵- نبرد نیروهای مشترک ارآن-ایبریا بر علیه پارتیان.
- دهه ۵۰- تصرف موقت ارآن توسط گرجستان.
- ۷۴-۷۲- یورش اقوام کوچ نشین آلان به ارمنستان، ارآن و گرجستان.
- ۸۹- حمله رومیان به ارآن و تصرف مجدد آن.
- ۱۱۷-۱۱۴- سالهای حکومت پادشاه گماشته ترایانوس در آلبانیا.
- دهه ۱۳۰-۱۱۷- ارآن خود مختار.
- دهه ۱۳۰- حمله آلان ها به ارآن.
- ۱۳۸- برخورد ایبریا و ارآن.
- ۱۶۶- شمول ارآن در پیمان روم و پارتیان.
- ۱۹۸- حمله مجدد آلتیان به ارآن.
- ۲۲۷- آغاز حکومت ساسانیان.
- ۲۳۷/۲۳۸-۲۲۷- جنگ های ایران و ارمنستان و شرکت ارآن در کنار ارمنستان.
- ۲۶۱- ارآن تحت سیطره ساسانیان.
